նէր 1½ սաֆէն ըարձրութիւն, վրան կամարա-  
ձեւ քարուկիր էր չինուած։ Դիշերը 100 հոդի  
մինչեւ լոյս աշխատեցրի եւ լեցնել տուի հոդ  
մեծ քանակութեամբ եղած քար ու հողով։ Ա՛լ  
ապահով էինք այդ կողմէից։ Իսկ փոքր դրան  
կողմէից եւս ապահով էինք, որովհետեւ մօտիկ  
տեղ յարմարութիւն չկար թնդանօթ դնելու եւ  
դարնելու։

Մտած օրերէս մինչեւ դուրս ելած օրերնիս  
ըուք, քամի, անձրեւախառն ձիւն էր։ Զօրքե-  
րու դրութիւնը շատ վատ էր։

\* \* \*

Երկու օր վերջ նորէն նամակ մը դրկեցին  
ինծի։ Երբ սուրբհանդակ կուգար՝ (մի կին եւ  
մի տղամարդ) նամակը մատներու մէջ առած,  
զօրքերը պոռողանը կը հնչեցնէին, հրացանա-  
ձգութիւնը կը դադարէր։ Նամակին պատաս-  
խանեցի։ «Մէնք նամակով իրար չենք կրնայ  
հասկացնել։ Թող' թէ կրիկ փաշան եւ Բաղէշի  
վալին հոս դան, անձամբ կը խօսինք իրարու  
հետ։»

Մեր իրանց գրած նամակնիս ամէն օր  
Սուլթանին հեռագրով կը հաղորդէին։ Էնտե-  
ղից իրադէի սանիէ ելաւ, թէ՝ թող երթան սար-  
կոմիսէր Մուղղար էֆէնդին եւ երկրորդ կո-  
միսէր Մահմուդ էֆէնդին։ Հետերին դրին  
Խորով եւ Յովհաննէս վարդապետները եւ ու-  
ղարկեցին մեր քով։ Նրանք եկան Աստուածած-  
նի տակ։ Յովհաննէս վարդապետին առաջ զըր-  
կեցին, իրենք յետեւից կուգային։

Վանքի Առաջնորդարանի սենենակը մաքուր  
փուուած էր։ Իննը աչքի զարնող լաւ տղանե-  
րուց իւրաքանչիւրին վրայ 6-6 կարդ փամ-  
փուշփ լեցուցի։ Վանքի մէջ մոմի դատարկ սըն-  
տուկներ կային, բերի նրանք ալ իւրարու վրայ  
դարսեցի, վրայի արկղներու մէջ լիք փամ-  
փուշտներ լեցուցի։ Վասողով տուղրակներ  
քովս էին, նաեւ տուփերով գործիքներն ալ

Հոգ էին զրուած : Մնացած տղաները եւ միաբանութիւնը լեցուցի ննջարանի մէջ, պատուիք թեցի որ ոչ ոք չդուրս զայ, պահապան մըն ալ զրի, որ պատուիքիս հակառակ ոչ ոք դուրս չկայ:

Վաղարշակն ու Տէրկեւանցի Բարսեղը զուուր բաց բրին՝ Հրամեցէ՛ք ըրին: Մուղղար էֆէնդին չէր ուզմիր ներս զայ, գողը վերցուցիր էր իր իրեն, որովհետեւ կը միշէր իր բրած չարիքները հայերու զյխուն: Մի տասը բոպէ ձգձուուցաւ ներս զարերնին: Վերեւէն Վաղարշակին պառացի: «Թէ Հրաման եղած է՝ թո'դ գտն, ի՞նչ կայ վախնալու: Եթէ զարներ ըլլալինք՝ Աստուածածնի մօտ կը զարնէինք. մենք խորելով մարդ չենք սպաններ: Դուռ որ զողէ՛, վերեւ եկո՛ւրք»: Դուռը զոցելու առանձ Մահմադ էֆէնդին սար կը զնէ դրան արանքը եւ ի՞րսէ. «Կիցի՛ր, ոտս կոտրեցիր»: Վերջուղիս ներս մտան:

Վաղարշակն առաջնին ընկաւ, բերաւ Առաջնորդարանի սենեկակը: Կոմիսէրներու վրայ սուրեր ու առաջանակներ չկային, արձակեր էին, ժօնկ պաշաճնական չորերնին էին հագած: Խոսրով բանեց ձեռքս եւ բաւաւ. «Զաւակի, համրութի՛ր»: «Ես ալ աղ կը մտածեմ, բոի, Հայր սուրբ, Համրութեմ չէ չհամրութեմ»: «Համրութի՛ր, Համրութի՛ր», բաւաւ: Միւսներուն ալ՝ «բարի էք եկերք» ըսի:

Մեր խօսակցութիւնը տաճկերէն էր: Ես Յովհաննէս Հայր սուրբին 95-էն կը ճանչնայի. մի Հարիւր անդամ ահսնուած էինք իրարու հետ, բայց զրան Խոսրով կը կանչէի, խսկ Խոսրովին Յովհաննէս կը կանչէի: Կոմիսէրները ի՞րսէին. «Անունները դուն սխալ կուտաս՝ Խոսրովին էս է, Յովհաննէսն էս է»: Մուղղար էֆէնդին բաւաւ. «Աննք Հոս եկեր ենք թագաւորի Հրամանաւ, առաջարկութիւններդ ի՞նչ է, ըրէ՛»: «Թուղթ ու զրիչ բերէ՛ք, ըսի, ու գրեցէ՛ք»:

Նրանք չորսն ալ մէկ ըսին, թէ զրելու պէտք չկայ, թէ, կ'երդուին, որ բոլոր խօսածներս, առանց խօսք մը աւելցնելու կամ պակսեցնելու հնչ ըսելու: Մենք առաջարկեցինք մեր պահանջները:

Ես ոսի. — «Մայիսեան բեփորմները եւրոպական մէծ սկսութիւններու երաշխաւորու-

թեամբ պիտի մտնեն երկրի մէջ: Սուլթանը ինքը ընդունեց այդ եւ ստորագրեց, բայց յետոյ ըրաւ ընդհանուր կոտորածը, որ զրեթէ մինչեւ օրս ալ կը շարունակուի: Ամառը Դաշտի մէջ զանազան գիւղերէն սպաննեցիք 59 հայ: Խալիլը ե՛ս եմ սպաններ, էնոր գլուխը կտրողը ես ինքս ևմ եղեր, ինչպէս նա կտրեց Սերորինը: Ահա էս ալ իրեն պատուանշանը, որ Սուլթանէն ստացեր է: Դուք ձերբակալել էք արվարինցի, բերդակցի, տէրկէվանցի 30-էն աւելի անմեղ մարդիկ, որոնք յեղափոխութիւնը կ'ատեն եւ թագաւորին հաւատարիմ են: Ես ուրախ կ'ըլլալայի էպայէս մի 60 ալ բոնէիք: Շարիֆ աղայի խնդրին համար բանատարկեցիք մինչեւ 20 հոգի, Մոկունք գիւղը այրեցիք, սրիկա՛յ մը Շարիֆ աղանիդ, սրիկա՛յ մըն ալ նսթերը: Նրանք իրար մէջ զործ են ունեցեր, գուք մեղաւորները պատժելու փոխարէն՝ ամրողջ գիւղը քանդեցիք, որ տարին տէրբութեանը կուտար 600 սոկի, և էպայի մարդ ալ ձերբակալեցիք: Ի՞նչ է պատճառը, որ 300 բանատարկեալներու մէջ 15 օրուան մէջ բանտի մէջ կը մեսնին 7 մոկունքցիներ: Բացարձակ յայտնի է, որ թունաւորեր էք մարդիկը»:

Մուղղար էֆէնդին բաւաւ.

«Մահմուդ էֆէնդի վէ մուրազագ էֆէնդիւար, Անդրանիկ րէկ հէր նէ փի աոյլիչոսէ, էշխուղիք տէյի միւզար Ալաշ իւչուն ահապատլք զըսա բուլունաջազ (Մահմուդ էֆէնդի, վարդապետ էֆէնդիներ, Անդրանիկը ի՞նչ որ կ'ըսէ, որ մենք կը լսենք, պիտի երթանք, նրանց առաջը Աստուծոյ համար վկայութիւն տանք) :

«Եթէ, բոի, իմ պահանջներու վերաբերմամբ քանի մը կեղծ ստորագրութեամբ թուղթ զրիէք, չեմ ընդունիք, այլ ոչ Փորմներու խրնդիքը, ընդհանուր ներումը պէտք է վեց պետութիւններու զեսպաններու կնիքներով կ'նքըւած, Սուլթանն ալ իր կնիքով վաւերացուցած պիտի ըլլայ թէ՝ մեր պահանջներուն ամրողջովին բաւարարութիւն կուտայ: Այդ թուղթը այլպէս վաւերացրած Պոլսէն կուգայ ձեզ, գուք կը զրիէք ինծի, ևս ալ կը տեսնեմ եւ այն ատեն դուրս գալուս կամ դուրս չդաստին ինչ որ պահանջները:

գիտցէք, որ վեց ամիս կռուելու ոյժ ունիմ : Եթէ կ'ուզէք՝ թնդանօթ բերէք, զարկէք : Մինչեւ ձեր ներս գալը, ձեղնէ հազարաւորներ կը սպաննուին, ապա միայն կրնաք մեղ յաղթել : Խսկ մենք որ օրը որ հրացան առեր ենք, հէնց այն օրէն գիտցեր ենք մեր մեռնիլը : Այսչափ տարի դուք լսա՞ծ էք քեւրդ մը կարաւան մը թալնելնիս, կամ փոստ մը զարնելնիս : (Լսին՝ չէ) : Լսա՞ծ էք անմեղ քեւրդ մը կամ թիւրք մը սպաննելնիս : Էն մարդը որ մեղի վնաս կը հասցընէ, 40 տարի ալ անցնի՝ մեր վրէժը կ'առնենք : Եթէ մենք ինքներս չկրցանք վրէժնիս առնել, մեղմէ յետոյ եկող ջան ֆետայիները կ'առնեն իրենց ընկերներու վրէժը :

Մեր խոսակցութիւնը տեսեց 3½ ժամ : Վերը ըր առաջարկեցին . «Հրաման ըրէ, մենք երթանք» :

«Ազատ էք, ըսի, բայց քիչ մ'ալ կեցէ՛ք,

թէյ թո՛ղ պատրաստեն, խմենք եւ յետոյ գացցէք» :

Ըրածո ձեւականութիւն էր, ո՛չ թէյ ունէի ոչ ալ շաքար :

«Թէյ որ խմցնէիր, առաջ որ եկանք, էն ատեն պիտի խմցնէիր», — ըսաւ Մահմուլ էլ Փէնդին :

Իջան բակի մէջ, վանքի փոքր հացերիցս միմէ հաց առան, կերան, մնաս բարով լսին ու գացին : Աստուածածնի տակ նրանց ձիւրը բերին, այնտեղից ալ նորէն բարեւեցին ու գացին : Նրանք բոլորը պատրմած էին իրենց մեծաւորներուն :

Այդ օրը Նոյեմբերի 12-ն էր, կերակի օր Յարութիւնը առաւօտուն մեռած էր եւ թաղած էինք Ս. Գէորգի մատուռի առաջ :

(Շարումակելի)

## ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ

Գրեց՝ Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն.

1914 Դեկտ. 23-ին, Թիֆլիսէն, կովկաս-եան ճակատի ոուս ընդհ. հրամանատարի կողմէ քաշուած հեռագիր մը կը հրամայէր երեք օրուան ընթացքին դատարկել Աստրախանն եւ սպասել Զուլֆայի մէջ : Միեւնոյն հեռագիրը կ'աեւլցնէր . ԿԾեղական քրիստոնեամերու մուտքը կովկասի մէջ կրնայ անհրաժեշտ համարուիլ :

Հեռագիրը, որու բովանդակութիւնը տեղական մահմեդականները ոուսերու հետ միաժամանակ իմացած էին, եկաւ ոգեւորելու արդէն խսկ կաղմ ու պատրաստ թրքասէրներու եւ գերմանասէրներու խմբերը եւ սարսափի, յուսահատութեան մատնելու քրիստոնեանները, որոնց գաղթը այլեւս անխուսափելի էր դարձած :

Խեղճերը պիտի թողնէին անթիւ հարստութիւն, բարեբեր դաշտեր, լեցուն մատաններ : Պիտի փակէին իրենց մշակութային այնքա՞ն նախանձելի հիմնարկութիւնները : Բազմաթիւ

հարուստ գրադարանները, թատերասրահները եւ հոյակապ ու չէն տները : Պիտի զրկուէին միանգամայն նախանձելի ու բարեկեցիկ իրենց կեանքէն, հայրենի գեղեցիկ բնութիւնէն ու կը լիմայէն, հայրենի նուիրական յիշատակներէն եւ իրենց տան մէջ, գրկացաց ընդունած գաղթականներու հեռագիրը, պիտի քալէին, ոտքով, ձիւնի եւ ցեխերու մէջ : Օրերով եւ շաբաթներով պիտի տանջուէին անօթութենէ, կեղտոտութենէ ու պիտի երթային Կովկաս ու բիշներու շէմքին պըսպէլու, ութիշներէն հաց մառալու...

Շատ շատեր՝ իրենց ունեցածը, տունն ու տեղը լքած, երբ կը բանէին գաղթի ճամբան, շատ շատեր ալ հանդիսա իրենց տունները նըստած կը ծաղրէին, խելազարի մը յատովկ սառնարութեամբ կամովին մուրացիկ դառնալու հակամէտ իրենց գաղթող դրացիներոյ, եւ բարեկամներու վրայ : Անոնք վայրու էին, թէ

հետ քեզիկ, ոչ մ օրէնքի, զարտ (բացի) դա-  
սոնք, հւայլն :

## 8. Յ Թ Գ

Յօդը բաղամձոյներէ յետոյ թ և ձայնա-  
ւորներէ ետք ն է, ինչպէս մարդը, քամուն :

Բացց նկատելի է՝ մանաւանդ Ըերու առ-  
բազարման յաճախութիւնը բառնրան վերջը՝  
երբ յաճախ խմառը չի ուահանջեր և նաև  
երբ բառերուն վերջը արգէն զետեղուած է ն  
յօդը (նորէնը, հոգունը, ամէն բանինը, եր-  
գուայինը, հարսինը) :

## 9. ԴԵՐԱՆԱՌԻՆ

ինծիկ, ինծմէ, ինծմով.  
քեզիկ, քեզմէ, քեզմով.  
ան, զան, անոր, անկի

կամ՝

նա, զնա, նորու — նորա, նարամէ, նա-  
նացա

ինչոք, զինքը, իրինք, զիրօնք  
ուի, ում, ումին, որին, որով, որոնցով,  
որոնցով

## 10. ՇԱՀԱՅՈՒ

ԱԱ, շաղկապը շատ ո շնուած Աի ուղուած է,  
հոգուն ա (հոգուայն ալ) :

ԱԱ (նէ) ուսմկական շաղկապը յաճախու-  
գէս է, չի հանէ նոյ.

## 11. ՄԱԿԻԱՐ

Մակրայներուն մէջ կը և անդիպինը սիպէս  
(սասպէս), նիպէս (նապէս), անէս (այլպէս),  
տնոլէս (այնպէս), ինորէս (հոն), ինուռու  
(հոս), ընտոր (ինչպէս), նւայլն :

Զուտ աշխարհարարի յասուկ հետ և հոն

մակրայները յաճախ գործածուած կը դըտ-  
նենք ի նախդիրին հետ. ի հոս. ի հոն :

## 12. ՀԱՄԱՉԱՍՏՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ

Դժուար է օրէնքներ սահմանել՝ ճշկելու  
համար համաձայնութեան կարգը և խնդրա-  
ռութեան պայմանները :

Գործածուած են՝

Հոգին մարդունը (մարդուն հոգին). անոր  
և ան իրեք օրով (անկէ երեք օր յետոյ). կա-  
զմնուէն օրովմ առաջ (կազմնուէն օր մը ա-  
ռաջ) :

Աներեւոյթը առհասարակ հոլովուած կը  
գործածուի. ինչպէս՝ կլլա՞ս ասելու ինծիկ  
(կլնա՞ս ինծիկ ըսել) :

Յաճախ կը տեսնուի հայցական խնդիր  
նաև չեզոք բայերու քով. ինչպէս՝ անփորձ  
պի հասնինք զմէր նիաթը (անվտանդ պիտի  
հասնինք մեր նողատակին) :

## 13. ՄԴՈՒՄ ԵՒ ԱՄՓՈՓՈՒՄ

Մամկօրէնի եւ անկէ սերով մեր նոր աշ-  
խարհարարին ամենէն զլսաւոր յատկանիշե-  
րէն մէկը մանաւանդ՝ շատ չետուած չափով  
կը գտնենք այս գաւառարարառին մէջ: Աը-  
զումներն ու ամփոփումները ծայրայեղ չափե-  
րու հասած են հոս: Ոչ միայն գրաբարի յա-  
տուկ կորուսման կահոննը (վերջին վանկի ուի  
և ի զեղչումը բարզութեանց և ածանցում-  
ներու ատեն) կիրարիուած է, այլ նաև զեղ-  
չուած են ուրիշ տառեր ալ, որոնց սղումը օ-  
րէնք չէ նոյնիսկ աշխարհարարի մէջ: Այսպէս  
ծառութիւն (ծառայութիւն), խօճութիւն (խօ-  
ճայութիւն), ուննալ (ունենալ), բերներ (բե-  
րաններ), եւայլն :

(Շարունակելի)

# ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՇԵՐԸ

## ՏԱՄՆԵՐՈՐԴ ՄԱՍ



ԱՆՔԻ մէջ կը գտնուէինք բոլորս՝  
թէ՛ տնաես, թէ՛ հովիւ, թէ՛  
զինուոր, մօտաւորապէս՝ 140  
հոգի: Ծխախուղ արդէն լրացած  
էր: Դեռ վանքը չմտած՝ և երե-  
խայ տիֆով հրանդ էին: Ե-ը  
եղաւ 12. մնացածները բոլորը մերկ էին, շո-  
րենին կարուած մնացած էր Մուշ: Մենք յդի  
կովեր կը մորթէինք: Փայտը լրացաւ. սոխվ-  
ուեցանք տղայոց փայտեայ մահակալներ  
(Թուոլ 65 հատ) վառել: Ալիւրը մնացեր էր 30  
կօտի չափ: Սապոն (օճառ) չկար, տղայոց  
վրան միամսուան կեղտ կար:

Զինուորներուս մէջ քիչ մը տրտունջ կար,  
կ'ըսէին՝ «գուրս ելմենք», բայց ինձ չէին ըսեր,  
իրարու կ'ըսէին: Ես կանչեցի բոլոր զինուոր-  
ները եւ ըսի: «Մինչեւ վերջը ես հոս պիտի  
կրուիմ եւ հոս պիտի մեռնիմ: Կը կուտի՞ք հե-  
տըս»: Նրանք ըսին. Շինչպէս կ'ուսկս, էնպէս  
ըրէ՛, մենք քեզնից խօս աւել չինք»:

Թաւլայի մէջ մտած զինուորները գիշեր-  
ները պահապանութեան համար կը փոխստըր-  
ուէին, կ'երթային կուտային: Մի 30 սանտի-  
մետր բարձրութեամբ ձիւն եկած էր, այնպէս  
որ ձիւնի վրայ մենք շատ լաւ կը տեսնէինք  
գացող եկողները:

Թաթոս Առաքեալի աղօրի յետեւից տե-  
սանք, որ մի քանիսը եկան ծառերի միջով,  
թաւլան պիտի երթային: Մի 50 քայլ տարա-  
ծութեան վրայ բաց տեղ է, ծառ չկայ, եւ հէնց  
այդ մարդիկ այդ տեղով պիտի անցնէին: Հէնց  
որ տեսանք այդ տեղը՝ սկսեցինք զալպեր (հա-  
յազարկ) զարնել: Երեքն ընկան ձիւնի վրայ, մէկը մտաւ ծառի յետեւը, մենք դրան մօսինով  
զարկինք, այդ ալ ընկաւ: Ընկած դիակներուն  
ալ տղերը զարկինք քանի մը անդամ: Զիւնի  
վրայ արինը կ'երթար, բայց առաւօտուն տե-  
սանք՝ դիակները տարեր էին: Մեզնից 100  
քայլ հեռու կ'ըլլար:

Կէսօր եղաւ: Ինչ որ ձայն մը կուդար,

կարծես պատը կը ծակէին: Հաւաքեցի ուլոր  
վանքականները, ըսի: «Էս ձայնը ուրկից կու-  
դայ»: Հսին՝ «Աստուածածնայ՝ գուռը կը ծա-  
կէն, որ իրենց դիրք ընեն մեր կողմը»: Ես  
հասկացայ որ Աստուածածնայ սեղանի կողմից  
սղատը ծակեր են, ներս են մտեր եւ գուռը կը  
ծակեն՝ մեզ զարնելու համար:

Աստուածածնէնը կ'առնէ, 40 մարդ, բարձր  
աշտարակ մըն է, վանքի պարիսպէն. 250 քայլ  
հեռու: Թիսթը կոցը լսելուս ատեն՝ զօրքերն են  
եղեր, որոնք կ'աշխատէին գուռը ծակել: Այդ  
ատեն մօտեցեր է սպայ մը, ուրագը վերցու-  
ցեր է զօրքի ձեռքէն եւ ըսեր է. «Այսպէս լի-  
տի ծակես»: Հէ՛ այդ միջոցին ես մօտին  
երեք անդամ զարկի իրարու վրայ դրա ա  
թիսթկոցի ձայնը կարաւ: Սպան ինկեր լուր հոն.

Շատ ժամանակ զօրքերը ֆէ՛, երնին հը-  
րացածներու ծայրը կ'անցընէին, գիրքե-  
րու յետեւը կը խաղացնէին, որ խարուինք պ-  
զարնենք: Տղայոց պատ ուիրեն էի դիտակող  
նայիլ, եթէ ֆէ՛ չուարնեն, իսկ եթէ զլուկ  
է զարնեն:

Անդամ մը մեր տղաներէն մէկը կը զարկէ  
զօրքերու այդպէս և բացանի գլուխը անցուցած  
ֆէսին, գնդակը կը կիկի հրացանի վողին,  
մուշկայի տակէն կը կոտրի հրացանը եւ կը  
տանի գլուխը: Վիշ լուրը իրենց մէջ կը տա-  
րածուի: Կ'ըսեն թէ ուրեմն անկարելի է, որ  
սրանց առաջ մարդ ազատուի: Գիշեր, մըն ալ  
քանի մը զօրք կ'ելլեն ծառի վրայ փայտ կը բ-  
րելու, որ վառեն տաքանան: Կացինի թիսթկո-  
ցին՝ տղերքը ասդիէն զալպ (հայզարկ) մը  
կուտան: Թիսթկոցը կը կարի, զօրքը ծառէն  
վայր կ'ընկնի, էն ալ կը սատկի: Այդ եղածն-  
ուը զօրքերը գացած, պատմած են դիւզացինե-  
սուն, որոնցից մենք իմացանք վերջը:

Երբ մենք ձիւնի վրայ չորս մարդ սպան-  
նեցինք՝ դիակները կը ընկեն եւ թաւլան կ'ա-  
ծին ու թաւլան ալ կը վառեն, որպէսով վերջը  
թաւլայի վառուիլը մեզ վերագրեն, իբր թէ

մէջը մարդիկ ենք թողեր, եւ մնաք փախեր: Թուուան վառեցին աշխ չորս ժամով սպաննելու երթ օրը, երբ մութ առաջ: Թաւլան ու ժամուած մէտափն էին: Մատաղի մէջ մօտ 50 բարդ խոռ էր չուած, իսկ թաւլան զատարկ էր: Ժայ, առաւար կանոնէն տարած էին ներդակ:

Երբ զորքերը թաւլան վառեցին՝ սկսեցին մէր բարձրանալ և միեւնայն տան մեզ հրացան զարդիլ: Մատ 100 հրացան զարդին: Թաւլաշի մէջ մուցած էին ոնտուկ մը փամաւած, որը չուատվ ու չաց թղթկալ: Այդ գիշեր ճիշչեր լոյն թաւլանը կը վասուէր: Իսկ ժամագոր մինչեւ երկրորդ օրը երեկոյ կը վառուէր: Երթկանը մութը տուած: Տունը բաց ըստ և 30 հազի գուրս հանեցի, բոլոր չայրուած փայտը ներս կրեցի, այնպէս որ եղաւ մի ամսուայ վառելու փայտ:

Ակաւ Նոյեմբերի 27-ի կերակի օրը: Այդ օր եկաւ մէր պահանջներու պատուախանը, որ ականութեամբ գրուած բան մէն էր: ոչ աններու կնիք կար, ոչ Առութանինը: Էր թէ՝ «Ճեր բոլոր պահանջներուն պթիւն տրուած է, բայց բէֆորմները շարթով, չեն կրնար գործադրըրը: Ի առաջնական առաջնականին, խօսած է առաջնուած մէկ գիմած են ած է ամէն բան կար մաս ներւ մ չնորդ»:

Էթէ՝ մէնք երեկուել գուրք մէր ու տուաչարկեցինք, դժը ուէտք է վեց պետքով պարագուուած եւ Սուլը անալէն վերջ մէնք պիտի բնենք մէր ըստի կը: Իսկ գուրք երեխայ մը խարելու համար թղթի վրայ գրեր էք քանի մը բառեր, ստորադրեր ու զրկեր էք: Պատրաստ ենք կըուելու: Ինչ կ'ուղէք՝ զրեցէք:

Այնչեւ այդ օրը Ալի փաշան ըսեր էր՝ զայնակոնները, իսկ Ֆէրեք փաշան՝ թէ «Ճին-ին որ ինծի պաշտօնական հրաման ըլլայ, և չի՞ իրնար ոմքակոնծերը: Ալի փաշան, բարկա-

ցած Ֆէրիքի վրայ՝ թողեր, դաշեր էր երգը բում:

Թուուք, քիւրտ, հայ, բուորն ալ մենէ յոյս սեր կարած էին: Դաշտի հայերն ու հայ կաթովիկները, ամէն դէնքը, մեղ համար եկեղեցու մէջ հսկում կ'ընէին: Վանքն ունէր, ժամանակից մնացած, երկու մեծ հրացան, որոնց մէջ կը գնէինք 15-ական տրամ վառող եւ կը գցինք, երեկոները, մէկը դէպի Դաշտը, միւսը՝ Յովհաննէսի քարերի կողմը: Դրանք՝ չորս ժամ հեռաւորութեան վրայ, թնդանօթի շափ արձագանդ կուտային: Ամբողջ հայերը կ'ըսէին՝ «ա՛հ, վանքը թօփեր զարկին»:

\* \* \*

Այդ օրը, Նոյեմբերի 27-ին, որոշեցի գուրս գալ: Նրանք, որոնք գուրս պիտի գային չեսան, թէ՛ յրոնքցի տղերք եւ թէ՛ վանքի մէջն, իրարու ընկերացուցի: Հեռուէն ցոյց տըւի, որ ով որ կորչի, դիմացի Մզրացոց սարի մարագը պիտի գայ:

Բոլորը կարգաւ շարեցի եւ վանքի բակի մէջ ման բերի: Քանի մը որոշումներ ըրի: Ես, Գէորգը, աւարեինցցի Պօլոսը, վանականներէն՝ Յովհէփն ու Մովսէսը, ընդամէնը 5 հոգի, խմբէն առաջ պիտի գնայինք (40 քայլ առաջ): Խումբին առաջէն պիտի քայլէին Բարսեղն ու Հաճին, իսկ յետնապահը պիտի ըլլային Վաղարշակին ու Սարգիսը: Զախմախլըները պէտք է զատարի ըլլան: Նրանց կուուելու իրաւունք չկայ: Խմբի առաջնորդներու, Բարսեղի ու Հաճի աչքերը պիտի մեղ վրայ ըլլայ: Մէր գետին չոքելու, խումբն ալ պիտի չորի: Երբ մեղի զօրք պատուածին մէնք հինգս պիտի զարկենք: Խումբը շուտով պիտի անցնի զօրքի ետաւ եւ սկսի զարկել: Երբ Նրանք կը զարնեն զօրքին, մէնք կ'երթանք, կը հասնինք իրենց, մէր ետեւը, այս անզամ, զատարի կ'ըլլայ:

Երեկոյեան ժամը 12-ին մշուշ էր: Երեք հոգի զրկեցի թաւլայի բուորը, երեք հոգի թափու Առաքեալի մասերու մէջ, երեք հոգի իշխանաց աղբիւրի ետեւի խոչոր ծառերը: Գնալոււ ճամբան այլտեղից էր: Էտոնց պատուիրեցի թէ՝ զաւրիան զայ, կը զարնէք, մի քանիսը կը սպաննէք, մնացածները կը փախնեն. սպաննուածներու հրացանները կ'առնէք, դուռը բաց կ'ըլլայ՝ ներս կուզաք: Դաւրիա բա-

Ժը 15 հոդիք եւ հարիւրապետէ մը բաղկացեալ խումբ մըն է, որոնք միշտ ման կուգան եւ կը հսկեն, որ զանազան կէտերի վրայ զօրքերը չքնանան: Մնացած տղաներուն ըսի, որ դուռը բաց ընկն: 12 հոդի դուրսը կայսեն: «Գիշերուայ երեք քառորդ ժամը անցած, ըսի, ես կուդամ ձեր քովը, իւրաքանչիւրդ ձեր շարքի մէջ կը մտնէք, իսկ մենք, հինգ հոդիս, առաջ կ'ընկնենք, դուք ալ կը հետեւէք»:

Այդ տղերքը դուրս դրկելուս պատճառը այն էր, որ դոնէն դուրս ելած ժամանակս, հէնց այդ տղերքը յանկարծակիի չդային:

Ժամը 3-ին ատենները, վարժապետին գաղտնի խօսեցի:—

«Այսինչ պառաւ կինը դուրս կը թողնէք, ձեզ բոլորդ եկեղեցիի մէջ կը լցնէք, դուռը վրանիդ կը կողպէք եւ բանալին կը ճգէք ոեւէ տեղ: Տնտես պառաւին ցոյց կուտանք բանալիի տեղը, դուրս ելլելուց յետոյ, թող պայ դրան երկաթները զարնէ: Եթէ ոչինչ պատահի՝ առաւտեան գնալու ատեն, կ'իմանան: Թող պառաւն ըսէ՝ դուռը չեմ բանար, մինչեւ Առաջնորդն ու Ֆէրիք փաշան հոս չդան: Երբ էնոնք եկան, պառաւը դուռը կը բանայ, էնոնք կուդան ձեզ եկեղեցու մէջ բանտարկուած կը տեսնեն: Եթէ դուք դուրս ըլլաք՝ ձեզ պիտի նեղեն թէ ինչո՛ւ դուրս ելած ատենին մեղի իմաց չտուիք: Որ բանտարկուած տեսնեն՝ ա՛լ չեն կրնար բան մը ըսեր»:

Խումբէն առաջին դացողներս հագանք եկեղեցու երկար, ճերմակ շապիկներ, որպէսզի ցնկատւենք: Ժամը երեքը քառորդին համբուրեցինք եկեղեցու դուռը եւ մեր երկու նահատակներու գերեզմանները ու դուրս եկանք վանքէն: Բոլոր տղերքը մտան շարքերու մէջ:

«Տղերք, մարդ չտեսա՞ք, ճայն բան չլսե՞ք»,— հարցուցի ես:

Հաւատորցի Մուրատը եւ Սոխոմզի Սիմոնը ըսին: «Հէնց էս գաղաթին ձայն մը եկաւ»:

Պողոսին հարցուցի: «Տղա՛, իրա՞ւ ճայն կուդար»:

«Զդիտե՛մ, ըսաւ, քամու վզզոց էր, ին էր»:

«Անցէ՛ք, ըսի, աեղներդ, ինչ որ կը կատար»:

կածիք, ոչ մի մարդ չի կնար մեր առաջը կայնել, կը զարնենք՝ կ'անհնենք»:

Մինչեւ Արարո քարի վերեւ հասնելիս, մի հինգ տեղ չոք զարիինք, լրտեսնեցնք, ոչ ինչ չտեսանք: Յանկարծ, տեսանք էս բարի տակից մի զօրք շարժուեց:

«Դուք ո՞վ էք, — հարցուց»:

«Փշու զաւակ, ըսր, ես կէս ժամ հոս նըստած էի, դու Հիմա՞ կը հարցնես: իտպէ՞ս պիտի պահես, որ ջանփետայիները չանցնեն»:

Խմբն ձեռքով կ'ընէի, որ անցնէին: Գէորգը ձիմն կը նետէի եւ կ'ըսէր՝ թէ անցէք: Զօրքը ըսաւ. «Հալլա, հալլա, ես ձևո չեմ ճանչնար, թէ դուք ինչ մարդ էք»: «Առաւու կ'ըսլայ, ես քեզ կը սովորեցնեմ: Ես իւզրացի Մահմէտ էֆէնտին եմ, դաւրիս կը պատինք, դուն կը քնանաս»:

Մենք էլի ձեռքով կ'ընէինք, բայց տղերքը էլի չէին անցներ: Զօրքը մունէ հինգ քայլ հեռու էր, քարի մը յետեւ կծկուած: Նա գիտ թէ մենք ով ենք, բայց չէր համարձակ բան մը ըսելու: Մեզնից 30 քայլ ցած քարի տակ, վրանիներ էին զարնուած խօսեցու զօրքէն մը 15 քայլ վերէ զարնուած էին: Քամիից նրանց ցութիւնները չէին լսեր, թէ

«Դուք ո՞ր զնդէն էք»,—

գերորդ», պատասխան:

«Քիրիննի թար»:

Տղերքը էլի չի

ես ըսի.

— Քաշուէ՛,

Հիմա»:

Գէորգը կամաց ձայլ:

— Տղա՛, մի զարներ:

Մենք չէինք ուզեր, որ հրացանի ձայլը, որովհետեւ մեր մէջ, ճանապարհին, ծանօթ տղերք կային: կը կակածէինք, իսկ զանազան կողմէներ փափննեն, զարնուածն, սպանելին: Ծղայոց մէծ մասը անլան, բայց վրայանուի սարի եղամից դնալու, ձիւնի վրայաց ուացեր, գնացնու էին հովիտը Քովս մնացին ութը ընկնամը՝ Մուրատը, Մովսէսը, Բարսեղը, Յանձնի, Զաթօն, Պոլոսը, Ընկեր ժը

եւս ու ես : Անցանք մի 30 քայլ : Այդ դօրը  
եւսից երկու հրացան՝ պոռալով .

— Հայութաբար , չան Փիտայիլար դաշտըլար :

Մէնք հասանք Այժմուի քարը և զիրք բառ-  
նեցիք : Չորս հոգից գորքերու մէջ սկսուեց  
Հրացանաղութիւն : Մէնք ականջ զրինք : Մեր  
աղանձներու հրացաններու ձախը չէր զար (մեր  
հրացաններու ձախը զօրքի հրացաններու ձայ-  
ներին շատ տարբեր էր , եւ մէնք շատ լաւ կը  
հանչնայինք) : Հասկցոնք , որ մերունք աղանձով  
անցիր են : Ռուսի մէնք ալ եւսանք էտ տեղից  
եւ սկսեցինք քայլել , սասանց կրակելու : Հոգ՝  
ձիւնը կը լլար 50 սանտիմետր խորութեամբ ,  
հանապարհ չկար , ձիւնը խորութով կ'ըրկին-  
ցնենք մեր ճամբան : Քանի կը բարձրանա-  
յինը էնքանք քամմին կը սասականար :

Այն մարտզր , ուր սպայժանեաւորուած էինք  
Հայութուելու , ձիւնով ծածկուած , հողի հատ  
հաւասար էր , չիրցանք գանել : Ելանք Ծիրին-  
կատարի ասածը : Քամին սարսափելի էր : Եթէ  
կանակնիս տայինք քամուն , գնալու պէտք  
չկար , քամին մէկ կը ասանէր : Քամիկ պատ-  
ճառով իջանք հովիս մը , ուրիշ պիտի երթա-  
յինք Հինիստը :

Մինչև լոյսը սոկակցինք . հանապարհը  
կորցնելու պատճառաւ ոչ մի չէնքի չհանդի-  
պեցինք : Երեք ժամուույ անզը 12 ժամէն հա-  
սանք : Լուսանալուն մնացած էր մէկ ժամ :

Գառանք Խոսք ըսուած դոմինք : Գուռը զար-  
կինք , մարդը բաց արեց : Այբ մարդը մեզ չէր  
հանչնար . օճախի վառեց : Վանիս ցամքեցու-  
ցինք եւ հրացանին մաքրեցինք : Մարդը բե-  
րաւ կոտր մը դորիի հաց եւ չէ մը կաթ :

Են հարզը էտ մուրգուն , մինչալէս եղաւ  
վանցի կուրիւ : Հաւառ պայման , չըխեմ ,  
Անդրէ էին է ներս մտել ու հուել է : 4,000  
գորք կայիրենց բոլորը : Մեր գաղէն (Հրատա-  
րիկ) կորցին 200 հաւ , վայտերը սարան ,  
տներ չինցին : Բներգակէն , Ալւարին էն , Նո-  
րաշէնէն , Տէրիկ վանքէն , օրական 50 մարդ կը  
բանեցնեն , 200 լուծ եղ կայ , վայտը է կը կո-  
րին , մշեցի վարպետներ կան :

«Ես մարդը ինչո՞ւ չի դուրս դար որ» :

«Մէկը կ'ըսէ , թէ դուրս դալ անկարելի  
է , թուսոն ըլլայ՝ չի կրաքական էլ : Միւ-

ուը կ'ըսէ , թէ դուրսէն օգնութիւն կը սպասէ :  
Զեմ զիտեր , ո՞ր մէկն է շիտակ» :

\* \* \*

Լոյսը բացուաւ . երկու տղայ ձգեցի ա-  
ռաջս , զացի Ըխնիսաւ : Հոդ ինձ բոլորը կը  
հանչնային : Մէնք գեռ մեր միւս ընկերները  
չէնք զտած : Չորս մարդ ուղեցի զբանցից ,  
որպէսզի զանազան կողմէր զրկեմ եւ իմանամ  
ընկերներուս մասին : Մէնք հոդ քիչ մը հան-  
գլսացանք :

Եկան ըսին , թէ Վաղարշակն ու Գէորգը  
Հովիտով անցան : Բանից դուրս եկաւ , որ է-  
նոնք մէնէ առաջ են անցեր : Վերցուցինք երկու  
մարդ եւ մէնք ալ ընկանք էնսանց ետեւից :

Դուրս որ եկանք՝ զիւղացիք ոչխարները  
թողուցինք , մեր հետքերը աւրելու համար : Բա-  
ւական առաջ զացինք : Տեսանք մի տասնեւ-  
հինք մարդ . երանք ալ մեզ տեսան : Երկու հո-  
դի մեզ մօտեցան , էտոնք երկու զափեցի հա-  
յեր էին : Հարցուցի միւսներու մասին : Բոին՝  
եօթը զափեցի քիւրա են , մնացածները հայեր  
էին :

«Ո՞ւրկից կուղաք» :

«Մուշէն» :

Հասանք միւսներուն :

Քիւրանքը սոքի ելան , գոյներնին բոլո-  
րովին սպրինած : Հասնննուու , սոքերնին ըն-  
կան : Մեր աղաքը , վամփուչները զրին՝ հը-  
րացանները զարնելու համար : Ես համուցի ,  
թէ ճամբորդ մարզիկ են , մինչև հիմա վնաս  
մը տուած չեն . Եթէ զարնենք՝ ամարդութիւն  
ըրած կ'ըլլանք : Բնդհակառակը , չզարնենք՝  
քիւրանքը վրայ լսաւաւորութիւն կը թող-  
նենք , կառավարութիւնն ալ զի՞ս անաւ ու կը  
զարմանայ , որ էսչափ տանջանք , նեղութիւն-  
ներից յետոյ , ճամբորդի պատահացինք , չզար-  
ինք , չսպաննեցինք :

Մի կէս ժամ առաջ զացինք : Մի մարդ ե-  
րեւաց յանկարծ եւ խկայն կորաւ : Առաջ զա-  
ցինք : Տեսանք՝ Մոկունքի եսթերի եղրայրն է ,  
որը վախսատական էր մեր քով առանց դին-  
քի : Նա վանքի մէջ ալ քիչ մը հիւանդ էր : Հա-  
սանք՝ տեսանք , ձիւնով ծածկուած , լիզուն  
բռնուած էր : Ինչ որ կը հարցնէի , աղուչի նը-  
ման զէմքիս կը նայէր , չէր պատասխաններ :

Ձեռքերը շինքինք, ձիւները թօթուեցինք, Քիւրտերու ձեռքի թաթնոցները անցուցինք նրա ձեռքերը, բերանը քիչ մը հաց մացուցինք: Քիւրտերուն ըսի:

— Շալակեցէք տեսնենք էս մարդը:

Քիւրտերը շալակնին միացրին իրարու, երեք հոգի դատարկեցան, շալակեցին էտ մարդը: Մի կէս ժամ գայինք: Տղուն նորէն հարցուցիր.

— Տղերքը ի՞նչ եղան:

Նա հեկեկալով ըստաւ:

— Գէորգը, Վաղարշակը, խումբն առին, գացին. քովս թողին Խասկեղու Մկոն եւ մեր գիւղի Ասատուրը: Իրենք Քոփիչն շալակաւոր պիտի դրէէին: Մկրօն ու Ասատուրը ձեզ տեսան, ինձ թողուցին ու գացին:

Մենք շատակեցինք: Զէյնիփոյիկ չհասած՝ մենք հասանք խմբի ետելից: Իջանք Զէյփոյիկ շիքը: Բոլոր Քոփեցիք հող լցուցին, ուրախութիւննին շատ մեծ էր: Տղերքը 4-5 տեղով ցըրուցին, հինգ հատ ոչխար մորթեցին: Քիւրտերը եկան ըսին.

— Մեղ հրաման կուտա՞ս, երթանք տեղերնիս:

Էսի.

— Զէ՛, էս գիշեր, դուք իմ հիւրս էք:

Նրանց առանձին տեղ մը տեղաւորեցի, չորս տղայ ալ մեզնից, որ չիակնենն, որովհետեւ Տափըլը մեր ճանապարհի վրայ էր, ուր կը գտնուէր Սալէք աղան, բինբաշին եւ 60 սատիկան: Մենք բոլորս վերջին աստիճան ուժասպառուած էինք:

Ժամ մը վերջ, մեռ շայոց ու ժողովրդի մէջ վասիսող մէշըզաւ: Գէորգին ու Վաղարշացին հարցուցի պատճառը: Նրանք ըսին՝ «ոչինչ»...

Բայց երեսնին արտում էր: Նորէն հարցուցիր.

— Ի՞նչ է եղեր, ըսէք ինծի:

— Դէ՛՛, ի՞նչ պիտի ըլլայ, այսինչ տուն գացած աղայոց՝ Մկրոյի հրացանի մէջ փամփուշտը կ'ըլլայ, չենք գիտեր ինչպէս կ'ըլլայ, կրակ կ'ընկնի հրացանի մէջ ու կը վիրաւորուի Տէրկեվանցի Բարսեղը: Կ'ըսէ, տասը անդամ կը պոռայ՝ «Անդրանիկ կանչեցէք քովս»:

Իսկոյն վեր կացայ զնացի: Գնդակը մտել էր ծիծը, որն ինձ վրայ շատ վաստ աղդեց: Մկօն ապրեր, ուրիշ աեղ էին պահեց: Ծու հարցուցի՝ ո՞րտեղ է էտ Մկօն, Վաղարշակն ու Գէորգը հասկացան, ու լուսին:

— Ի՞նչ է, կ'ուզեն մէկը երկու լնել: Երբ տեղ հասաւ, կամ հէնց ճանապարհին, լինչ գործ ունէր փամփուշտը հրացանին զրած:

Բարսեղն ըստաւ:

— Տղուն ոչինչ լուսես:

— Աւելի, լամ էր, ըստ Բարսեղը, ևս վանքը Յարութիւնին քովը թաղուէի, քան էսպէս սնապատիւ զարտուէի:

Ջուր ուզենց, բերի առւի. դարձայ՝ հասկցայ, որ պիտի մեռնի:

— Իմ քեզի զսելիքը ըս է, — ըստ Բարսեղը, — իմ փոքրիկ երեխան, որ մեծանայ, դպրոց մը տաք:

Մի տասը բոպէ չանցած տղան սկսաւ սառչւ. այլեւս համարձակ չէր կրնար խօսիլ: Այդ բանի պատճառով, մենք, դրեթէ, հաց չկերանք:

\* \* \*

Յո վերցուցի իստմըը, եկայ, իջայ Քոփի: Կը գաոկածէի, որ զօրքը յետեւնիս գար: Վաղարշակն ու Վարդիսը թողի հիւանդի քով:

Գիշերուայ ժամը չորսն էր, որ Վաղարշակն ու Սարդիսը եկան ըսին թէ Բարսեղը մեռաւ: Գիւղացիք չոս պիտի բերեն: Գիւղի քեաթիպը, Փուրթօն, եւ գլաւորները ըսին. «Մենք կը թագինք էտ Բարդը, անող կացէք, կուայ, ալ ունինք»:

Ժամը հինգին ու ուր հետնը Քոփին, ուր կից առանք հինգ մարդ, ուրութ մեր հիւանդները: Վարդիցին: Ուստարացին հասաւ ու Գիւղուցն:

Դիւաչէնցիք վախնալով թէ զօրք ինչ, վախսան, ոայց երբ հասկացան մէլ ով ըլլալը, բոլորն այ եկան:

Ոմքուն համակիր սասունցիք հարիւրաւոր մատան ներ էին խոստացեր զանազան սուրբ բերուն, մէղ աղատելու համար:

Նամակներ գրեցինք Կէլիկուզան ու Սէմալ. Երեկոյեան, երկու գեղից էլ 100 հոգի եկան: Տղայոց մի մասը դրէցի Կէլիկուզան,

իսկ լուսարացին, ևս, 100 հոգով, անցայ Սէ-  
րալ:

Հոն կանչեցի Տէր-Առատիկաը և մի քանի  
Համակիրներ, պարզեցի թէր դրութիւնը, որ  
ի կոպէկ չունենք, ուստեղու հաց ալ չունենք:  
Երանք ըսին.

— Զէ՞ որ դուք ազգատուած էք. մեր ուսե-  
լիքը պիտի կորմնէք՝ մեզ տանք:

Անմիջապէս 100 կոտ ցորեն հաւաքեցին,  
աղացին, ալիւր զարձույին, ու զրկեցին Կէլի-  
կուզան: Համաստակցինք Տաղւըրին ըսուած  
թաղը, Գէմօ Չաթոյին տանը:

Մյու ձմեռը ևս շինչեցի 40 հատ հրացանի  
դոնդտիս: Քիչ թէ շատ հասկացող զինադործ  
վարժեած մը բերի, հրացաններու վրայի պա-  
կասութիւնները լրացուցինք:

Մշոյ կողմերին, գիշերով, նամակ մը զըր-  
ուած էր ինձի, որը երկրորդ օրը, ցերեկուայ  
ժամը 8-ին ստացաւ, թէ «խումբ մը եկած է  
Սարուի և Հրայրի առաջնորդութեամբ և  
Դաշնի մէջ կուրի բռնուած են: Ամրագ զօրքը  
դնաց: Երբեք պարտականութիւն ձեզի լուր  
տառ է»:

Անմ ընապէս մերդուցինք մեր զորհիք,  
վասար, գնդակ և ճանապարհ ընկանք: Մինչեւ  
Սէմալ հասնելիս թէ՛ մողովուրդ, թէ՛ զին-  
ուոր, հետո եղաւ 41 հոգի:

Գիշերուայ ժամը 5-ին զուրս եկանք: Զիւ-  
նը շատ էր, ամպամած գիշեր մըն էր: Բար-  
ձրացաց Սէմալոյ գիմաց, Զիարաթ ըսուած  
սարի զլուտիք:

Կանչելով խորհրդակից ընկերներա՝ ըսի.

— Մէնք այլեւս չենք իրնայ կոուի վայրը  
հասնել: Երբ զանանք Դաշտի երեսը, կամ  
հրացաններու ձայնը լուէք, այն տաեն մենք  
կ'իջնենք Մուշի վերին թաղը և կը սկսինք  
զարնել, որպէսի զօրքը վերադասնայ Մուշ  
և աղայոց վրայ կուրս թէթեւնայ:

— Վերի թաղի զիրքը ի՞նչպէս է, — հար-  
ցուցի Վաղարշակին ու Հաճին:

Երանք ըսին.

— Հատ լաւ է, 20 տուն իբրու հետ կոր-  
զու շինուած են, պատերը կը ժամկեն, մեղ  
զիրք կը շինենք:

— Երկար մնալու զործ չունենք. Երբ զօր-  
քը վերադաւ, մենք կը քաշունք սարու:

Մէնք ցածրացանք Մշոյ երեսը: Մուշին  
կէս ժամ հեռու էինք: Ուշաղրութեամբ նայե-  
ցինք չորս կողմը. ոչ ձայն կար ևս ոչ ըլլուցը  
կ'երեւար: Գացինք Փիթառ: Նամակ մը զրե-  
ցինք Փիթառէն Մուշ, թէ՝ «մէնք հոս եկանք,  
ի՞նչ եղաւ ձեր տուած լուրը, կ'երեւի սուտ  
էր»:

Երանք պատասխանեցին.

«Մէղ լուր տուողը կոմիսար Մահմէտ է-  
ֆէնարին էր: Զօրքի գալը միշտ է: Երէկ զիշեր  
քիւրտ Բարսեղ զիւղի մէջ գտնուած տեղա-  
կան խմբերուց վերցրեր է 200 հոգի, զացեր է  
մի տեղական զատ ոչնչացնելու համար: Քիւր-  
տիրն ու սատիկանները զրանց տեսեր են եւ ի-  
րարու զարկեր են 2-2, 3-3 փամփուշտ: Տղա-  
ները զացեր ցրուեր են իրենց զիւղերնին: Աս-  
տիկանները եկեր, կառավարութեան յայտներ  
են, թէ այսինչ տեղը խումբ մը Փետայիններ  
տեսեր են: Իրողութիւնը այդ է եղած»:

Վանքի կոռուին մեր կողմէն սպաննուած  
եղան Յարութիւնը, Խաչն, Ղաղարը, եւ վե-  
րաբարձած տեսն Քոփ, Ընկերի (Մկոն) ձևո-  
քով հրացանին զոհ դնաց Տէրկելվանցի Բարսե-  
դը:

Թշնամու կորուստը անհամեմատ տեսիլ  
մէծ էր: Կոռուի տաեն սպաննուեցին 12 զօրք եւ  
երկու օֆիցիէր (սպայ), բայց զիւաւոր վնասը  
կոռուից անմիջապէս յետոյ էր: Զօրքուը տի-  
ֆով բռնուեցան, օրական 20-30 հոգի կը սատ-  
կէին:

Բայց զինուորական բժշկէն՝ Հեռազիր  
տուին Պոլիս եւ բժիշկ մը եւս պահանջեցին:  
Պոլիսն ազած բժիշկը եկաւ, զինեց, ըստ, որ  
շատերու թուքերն արգուած են, կը մեռնին:  
Մէջերնին կային զիւահարներ, որոնց ձևքերը  
կաղած էին, որպէսի ետեւ իրենց միսն անդամ  
կը կրծէին, ու զանազան վնասներ կը հացը-  
նէին իրենք իրենց:

Մշոյ թուքը ժողովուրդը այդ բանը կը  
վերադրէր վանքի զօրւութեանը, որին իրենք  
եւս կը հաւատային: Մէկ-ու կէս ամսուայ ըն-  
թացքում սատկեցան 553 մարդ:

Ֆերիք վաշայի հակառակորդը, Ալի-վա-  
շայի խորհուրդով ամրող Մուշը զտնուած  
բարձր զասակարգի մարդիկ ժողովրդի 3500  
ստորագրութեամբ բողոքադիր մըն էին զրեր,

թէ Ֆէրիք փաշան 800 ոսկի կաշառք է վերցրեր եւ ազատ թողեր Անդրանիկը : Ֆէրիք փաշան ուղեցին Պոլիս : Նա զնաց, բայց չհասած՝ իր-գրում սատկեցաւ :

\* \* \*

Երբ մենք վանքէն դուրս ելանք՝ մեր անցած գծի վրայ եղած դորքերու (որոնցից մէկի հետ երկար ու բարակ խօսակցութիւնից յետոյ անցանք) վրայ հսկող զօրապետները քննութեան ենթարկուեցին, սուրերնին առին եւ բանտարկեցին :

Մեր նիւթական պակասութեան եւ Սէմալէն ցորեն պարտքով առնելուս պատճառով, Վաղարշակը, Գէորգը, Անտրօն, Միսաքը, Պօլոսը, Աստուրը, Վարդանը, Սիմոնը եւ իսոն ուղարկեցի Դաշտը եւ պատուիրեցի, որ Բլիյս, Յունան, Ցրոնք մօտ 12 ոսկի իրենց գանձանակների մէջ կայ, ստացականներ տան եւ դրամները վերցնեն : Ապա՝ դան նորչէն, բան մը, եթէ կրցան հոն հանդանակեն ու դան Հաւատորիկ :

250 զրուշի մանր-մունը իրեղէններ ուղած էի, ցուցակը իրեն տուած էի : Նաեւ պատուիրեցի, որ իւրաքանչիւր դիւլ՝ մի օրէն աւելի չմնան : Տղերքը, ըսածիս համաձայն, կ'ընեն ու կուգան նորչէն :

Առաւօտեան, չորս նորչէնցի մատնիչներ, զրաւոր կը պատրաստեն իրենց մատնութեան ձեւը, երկուքը կ'երթան Մուշ, կը ներկայացը-նեն միւթէսարիֆ փաշային :

Միւթէսարիֆը կ'ըսէ այդ երկու մատնիչներուն :

— Հայեր, երեւի էսօր դուք շատ էք Խը-մած, խելքերնիդ դիմուներուդ չկայ, ելէ՛ք, դը-նացէ՛ք :

Նրանք կ'ըսեն .

— Ի՞նչ խմած, 8 հոգի են, 3 տեղ, այսինչ տեղեր նստած : Կամ զօրք կուտաս, կամ հեռագիր կուտանք :

Այդ ամիսը իրենց Ռամազանի ամիսն էր : Միւթէսարիֆը լուր կուտայ զօրաց հրամանատարին, զօրքը դուրս կուգայ : Զիատոր զօրքի հրամանատարն էր՝ Զօլաղասի Հիւտէյն աղան, բնիկ մշեցի, որ կը վարէր հազարապետի պաշտօն :

Հիւտէյն աղան, մինչեւ վանքի կուտից, մէն-չափ հետամուտ չէր ջան-ֆետայիներուն : Այդ օրը նա կատաղեր էր : Շուկայի մէջ կը պատահէի մշեցի յայտնի գաղանի ժը, Խալիլ եւ Փէնտիլին : Նա կը հարցնէ :

— Հիւտէյն աղան, խէր ըլլայ, ո՞ւր կ'երթաս :

Ան կը պատասխանէ :

— Իրիկուան իփամարը ինծի համար ըլլայ, եթէ ես կտոնյ զլուկը չկորեմ, բերեմ : Գիտնին, թէ էտ է Աստավելաց վանքն է, պարխաղ-ներու ետևէցի կը կրուեն :

Խալիլ էֆէնտին կ'ըսէ . «Ենծի կը լսես, չես երթար» : Հիւտէյն էֆէնտին կը կրկնէ նոյն խօսքերը եւ ձին կը քչէ . զօրքերն ալ յետեւից կ'երթան :

Երեկոյեան 10½-ին կը հասնին նորչէն :

Տղայոց երեքին՝ Աստուրին, Վարդանին, Խոոյին (հրաման առած՝ իր դիւլ զացած), որ անզէն էին, դիւլացէք կը խարեն թէ՝ «բոլոր տղերքը դուրս եկան, դուք ալ դուրս ելէք» : Դուրս ելողները կը տեսնեն Հիւտէյն աղան : Տղայոց դիւլքը բաց դաշտ էր :

Հիւտէյն աղան յետեւէն կուգար՝ ըսելով :

— Մի՛ փախնէք, շան որդիք, էսօր ո՞ւ կ'ուզէք պղասուել :

Իսօն կ'ըսէ .

— Տղե՛ք, զարկէք դրանց, հասան :

Աստուր եւ Վարդան չոք կը զարնեն, երկու հրացան կը կրակեն : Գնդակը կ'առնէ Հիւտէյն աղայի սիրտը, ձիուց կ'ընկնի Մեղրագետի ջուրը :

Դիւլի տղաները հրացաններու ձայնից դուրս կուգան տներից եւ յետեւից կը զարնեն : Արդէն ժամը եղած էր 11: Կոիւը կը շարունակուի, ոտաւոր զօրքը կը հասնի :

Այդ կուլին կը սպաննուին, բացի Հիւտէյն աղային, մէկ սպայ, երեք զօրք եւ չորս ձի : Իրիկունը մութ կուտայ : Տղերքը չղիւտէին դիւլի ո՛ր կողմից դուրս գան : Դիւլը 400 տուն է եւ հարուստ : Երկու կին, կուժը ձեռներին, ջուր բերելու պատրուակով, կը լրտեսէին զօրքերը : Տղերքը կ'անցնին բաց տեղից : Դիւլի բոլորը հայ կաթոլիկներ են : Ռուսաց կոնսիլ-լը գեռ Մուշ էր :

\* \* \*

Սասունցիք ինձի լուր բերին, թէ Նորչէն  
է, տղայք պաշարուած են Սուրբ Առ-  
քի Նկեղեցու մէջ:

Վերցուցի քովի ընկերներս, զիշերով ճամ-  
փայ Դաշտ: Գարնան ժամանակ էր, Դաշ-  
տը շատ ցեխ էր: Ճանապարհին պատահեցին  
երկու սուրճանդակ: Դէորդ եւ Վաղարշակ գը-  
րուծ էին թէ՝ տեղէդ չչարժուես, մենք ապա-  
հով դուրս ելած ենք, Նախնակ կը զանուինք,  
վաղը երեկոյ, հոգ կը լինենք: Երկրորդ իրի-  
կուն կուղան մինչեւ ջրից արդիներն ու հնամ-  
ակը: Բուր ու ձիւն կը զարնէ: 24 ժամ հօն կը  
մնան անօթի, ծարաւ: Անկարելի կ'ըլլայ սարը  
կ'առ, կը վերադասնան կը զնան Սուլուն: Զայս օր վերջ զրկեցի չորս բարանաւոր սասուն-  
ցի, որ ընկերներու առաջ ընկնեն ու բերին:  
Կանք դաշին:

Տափրկայ զայմաղամ Սալէ աղան, հօն  
Հաւատաւուելու օրին ինձի լուր դրկած էր, թէ  
եթէ իրեն, բնակութիւնը սրաով է, հօն մնայ,  
եթէ ոչ կը թուզնի ու կը հեռանայ:

Ես պատասխանեցի:

«Դու սասունցոց խոստացար բանտար-  
կեաները ապասել ապա, քոչերու զալուն ար-  
գելք հանդիսանալ, բայց խոստումդ չկատա-  
րեցիր ու պատճառ կը զտոնաս զօրանոցներու  
շնութեանք»:

Այսուհետեւ, Սալէ աղան մեղանից կը  
փախնար միշտ: Դեռ պրն, վահանը չէր եկած:  
Գիւղաշինու: Մկրոյի տան՝ Նազարի սպաննե-  
ցինք, որ երեք զիւղի վկայութեամբ մտանիչ  
էր: Այդ այն Նազարն է, որ Աշմալ կը պոսար  
թ՝ «Ճանք կրնանք թաղաւորի գէմ զնալ, պի-  
տ զօրանոցներ չիններ»:

Բոլոր զիւղացիք Նազարի սպանութեան  
մասին լուր տարածեցին թէ՝ նրան Դօմուզրա-  
ցի առաւ, մեռաւ: Քանի օր վերջ միայն Սա-  
լէ աղան և Մուշի կառավարութիւնը խմացան,  
որ չտ մարդը սպաննուած է:

Այդ առենները մեռաւ նաև Շէնըկայ ոչս  
Հէպօն, այն Գրքոյի եղբայրը, որ 94-ին կը  
կուէր: Հէպօն այն առեն հովիւ էր: Հէպօն,  
ինչպէս իրենք՝ տնեցիները կը պատմէին, Մեծ  
Պատի վերջին օրը, կերեր էր 60 հաւկիթ, եր-  
կու հաւ եւ խմեր էր երկու գրուանքայ օղի,

33 դաւաթ թէյ: Հէպօն, ապրեցաւ միայն մին-  
չեւ երկուշարթի լուսանալու գիշերը:

Կառավարութիւնը Հէպօյի մահը մեղ վե-  
րադրեց: Մուշին լուր եկաւ թէ՝ բժշկով ողիտի  
զան, Հէպօյի եւ Նազարի դիակները զերեղմա-  
նից պիտի հանեն ու քննեն:

Ես անմիջապէս լուր զրկեցի Սալէ աղա-  
յին թէ՝

«Նազարն ես եմ զարկեր, իսկ Հէպօն իրեն  
մահով է մեռած: Ես լսեր եմ, որ մարդիկ պի-  
տի զան եւ զիակները զերեղմաններից ողիտի  
հանեն: Եթէ դրա առաջքը չառնես եւ, հոս,  
զիւղն մարդիկ ձերբակալեն, ալ ո՛չ դուն  
հոս ողիտի մնաս, ո՛չ ալ քո տաւարդ ու վրանդ,  
ու ոչնարդ Մուշին գուրս պիտի զայ: Խալիլը  
միաք բեր: Եթէ լաւ վարուես հայերու եւ իմ  
հետաս, ինչպէս քո հայրն էր եղած, նստէ՛, ա՛ն  
էտ ամսական 25 սուկին, ապրէ՛ քեզ համար:  
Իսկ եթէ ոչ՝ հիմա պիտի բառնաս երթառ»:

Իմ եւ Սալէ աղայի հետ բանակցութիւն-  
ները ընողը՝ Գիւղաչինցի Գրէն էր: Երբ սա  
կ'ըսէ ըսածներս, Սալէ աղան կը դառնայ զե-  
տուի կ'ըրէն ու կ'ոսէ.

— Ինքը ինձի մեծ եղբայր, ես՝ իրեն փոքր  
եղբայր, ինչպէս ինքը կ'ուզէ, էնուէն էլ կ'ը-  
նեմ:

Եւ արգիլեց էտ զիակները հանելու լիրն-  
գիրը, եւ ինձի լուր տուաւ թէ՝ «Հատ ֆեսաւ-  
ներ կան, կուզան իմ մասին բաներ կը խօսին,  
չհաւատա»:

Երբ ու Վահանը եկաւ՝ գրան եւ իրեն հետ  
եղած տղաներուն տեսեր էին քրտերը կորեկայ  
ապրեւրի քովը:

Քիւրտերը կ'երթան Սալէ աղային կը  
պատմէն, թէ «սուրը 25 ջան-Փետայի անսանք»: Սալէ աղան Գրէն զրկեր էր քովս թէ եկալիները  
օտարական են, թէ Մշու դաշտ:

Ես Գրէին ըսի: «Կ'երթան կ'ըսես, որ Կո-  
րեկայ աղրիւրը հինգ ճամբայ ունի, մէկը  
կ'երթայ գէպի Մուշ, մէկը՝ գէպի Փեթակ,  
մէկը՝ Հաւատորիկ, մէկը՝ իւսութի տուն,  
մէկն էլ կուզայ Սէմալ: Օրը հազար չալակաւոր  
կ'անցնի էտ աղերուզ: Քիւրտերը ըսին՝ «Ջան-  
Փետայի տեսանք», գու հաւատացի՞ր»:

Կուրպաւու քիւրտ ըսած Բարսեղը, որ վեր-  
ջերս Քեսի կը կոչուէր, այդ առենները միշտ

Դաշտ կը մնար, կը նստէր ու կ'ուստէր, կը իւը-մէր:

\* \* \*

1903-ի գարնան, երբ գեռ էլլի ձիւն կար, ժողովուրդի միաքը սկսաւ պղտորուել, ինչ-պէս եւ մեր զինուուններունք:

Կոտո-Հաջին, Քեռին եւ Սպաղանաց Մակարը քանի մը տղաներով նորէն հեռացան խումբէն, Ախլաթէն զէնք փոխադրելու պատրուսակով: Բայց Ախլաթէն փոխադրելու ոչ մի զէնք կար: Նրանք, ինչպէս եւ Սոկաղին դացին Ախլաթ Հրայրի քով: 4-5 օրէն Հրայրը վերադարձուց էտ մարդիկը Սասուն, ինծի ալ նամակ մը գրեց, թէ՝ «Թող էս մարդիկը առժամանակեայ խումբը կառավարեն, իսկ դու հանգստացիր»:

Ես ուրախութեամբ ընդունեցի եւ մի կողմ քաշուայ, նստայ: Հետո եկան նաեւ Վաղարշակն ու Գէորգը: Ժողովուրդը արդ բանէն չատ գրգուեցաւ: Եկան 40 հոդի տալւորիկցի, ախպեցի, հիթենցի, իշխնձորցի, նաեւ Շատախի գիւղերց, կէլիկուզանցիք եւ Սէմալի Տէրկարապետը, մաս մը ժողովուրդի հետ: Այդ բոլորը առանձին ժողով ունեցան, որից յետոյ առաջարկեին Հրայրի կողմից որոշուած այդ խմբապետներուն թէ՝ «մենք բոլորս հոս դրսուածնիս, ո՛չ ձեզի հնակարան կուտանք, ո՛չ ձեզի հուտանք, ո՛չ ալ կը թողնենք մեր սահմաններու մէջ: Գնացէք, թող սէմալցիք ու շէնիկցիք պահեն ձեզ»: Նրանք ստիլուած գնացին Ծէնքը, ուրկէ անցեր էին Դաշտը:

15 օր չտեւեց, եկաւ պ. Վահանը: Առանձին ժողով մը ունեցանք իմ խորհրդակիցներով միասին: Այդ ժողովին եկած էին նաեւ Դաշտը գացող տղերքը՝ Հաճի Մկրտիչ, Քեռին եւայլն: Դուրսը ոչ մի զինուոր մնացած չէր. բոլորն ալ ներկայ էին: Ոչ մի զալոտնի հաշիւ չունինք՝ ո՛չ հացի, ո՛չ զէնքերու, ո՛չ փողի: Բոլորը մանրամասն գիտէնք թէ՝ ո՞ւր ինչ ենք առեր, ինչ ենք տուեր:

Պ. Վահանին յանձնեցի բոլոր զէնքերը, հաշիւներուս մուտքն ու ելքը ցոյց տուի, յանձնեց նաեւ մեր խովութիւններու պատճառով ժողովուրդին տեղեկադիրները:

Խալիլի ծոցէն ելած կնիքներու պատճէնները, որ առաջուց առեր էի երկու շարք թղթի

վրայ, տուի: Պ. Վահանը ամէն բան հասկացաւ: Այն ատեն Վահանը արտասահման որինց հաւատորցի Մուրատը, սոխովոմցի Սիմոն: Եւ Մովսէսը. որովհետեւ Սիմոնը կորոներու մէջ միշտ խոյս էր տուած, նոյնիսկ նորչէնի կը ու ուին՝ կնոջ չոր էր Հագեր, Մուրատը զինուոր չեղած մի կին էր սպաններ, իսկ բերդանկլցի Մովսէսը զինուորութեան ընդունակութիւն չունէր: Դրանդ ընկերականեց նաեւ Փոթիայ Արամը, որը Սերորի կոռուին հրացանը նետած, հեռացած էր: Մուրատը իր չորս ընկերներով արդէն կանուխէն հեռացած էր (Սպաղանաց Գալէն իրենց գիւղի կոտորածէն մինչեւ վերջ իմ քովս եղած էր): Բայց Մակարի զէնքը քովը թողնելով, Վահանը ըստաւ: «Կ'երթաս քո հաշոյդ կ'ապրես»: Իսկ միւս ընկերները զինաթափ ըրաւ:

Մոկաց Մկրտիչը Դաշտի մէջ փող հաւաքած եւ զեղծումներ ըրած էր: Վահանը կանչեց՝ չեկաւ: Այն ատեն մարդ որկեց եւ անոր զէնքերը առնել տուաւ: Մոկաց Մկրտիչը վերջը կառավարութեան անհատուր եղաւ, մինչեւ հիմա ալ (1905) բանտն է: Մակարը, ինչպէս Առաքելոց կոռու առեն յիշեցի, մեր վանքը մտած առեննիս, Դաշտի մէջ 30 ոսկի փող էր հաւաքած, բայց մինչեւ Վահանի գալը՝ ծախսած, կերած էր:

Երբ Վահանը եկաւ՝ հետն ունէր պաշտօնական թուղթ՝ «Դաշնակցութեան կամքը ներկայացնող Մարմնի կողմից Բարձրաւանդակի համար»: Գիսակն ալ իր կողմէն գրեր էր ինծի:

«Սիրելի Պարոյր, ահա՛ պ. Վահանը կուղայ, որ լիովին իրաւունք ունի տեղական գործերը վարելու: Ամէն ջանք պիտի թափիս՝ պ. Վահանի կեանքի ապահովութեան համար: Տեղական գործունէութեան հետ մանրամասն կը ծանօթացնես, կը պատմես իրեն անցեալ-ներդ: Շատ կարելի է ես ալ գամ մինչեւ աշուն: Կառավարութիւնը հետքից կը պատի»:

Անցաւ մի օր: Պ. Վահանը առանձնացած գիւղերու մարդիկ կանչեց եւ ժողով մը ունեցաւ: Մեր քանի մը հակառակորդները բողոքած էին, բայց այդ բոլորը հասկանալով՝ նշանակութիւն չուուաւ:

Անցաւ մի քան օր: Կոտո-Հաճին սկսաւ նորէն խումբի մէջ խլուտումներ գցել: Կէլիկու-

դիւղի մէջ կը զանուէինք: Առաւօտ դուրս է իք: Տեսնեմ մի զարմաղալ դուրս եկած է կոտո-Հաճի զէնքերն առնուած են: Պ. անը ինձի պատմեց թէ՝ «շատ յանդիմա- իւնիկ բրաւ ինձի կոտո-Հաճին: ըստ՝ բրեր չեմ ճանչար քեզ, դան ո՞վ ես: Այդ դու խմբի մէջ մնալը աւելորդ է»:

Կոտո-Հաճին իրեն կողմէն ալ կը պոռար. միշտ մըն ալ զէնք վերցնեմ՝ էսպէս կ'ընեմ, չուրէս կ'ընեմ»: Ժամանակ մը վերջ, Վաղար- շան ու Գէորգը միջամտեցին ով. Վահանին, որ Հաճին զէնք տայ: Պ. Վահանը ինձի հար- ցու՝ «Դու ի՞նչ կ'ըսես»:

«Ոչինչ չունեմ ըսելու, ըսի, Վաղարշակի սոյ համար՝ ևս ալ կ'ըսեմ, թէ տուր, բայց աջարնէ կ'ըսեմ, որ արդ մարդը, զէնքը քին, չի կրնար հանդիստ մնալ»:

Վերջապէս Վահանը զէնքը տուաւ Հաճիին՝ յամանաւ, որ խմբից հետու մնայ և իր հաշ- վ տարիք:

Զանցած մի 15 օր, Կոտո-Հաճին դացեր, բայց վերգրնցց ոչխարը վերցուցեր, բերեր է: Հսկիւր հայ էր եղեր: Իրեն հետ եղած է- նաւ երկու դաշտեցի հայեր:

Ոչխարը հացուցեր էին Ծիրինկատար: Երսերը տեկի ճարպիկ, քան իրենք, եկեր նուեր էին Կորեկայ աղրիւրի տառջ, եւ երբ Կոտո-Հաճին պիտի անցնէր էնոնց առաջից, քիւրսերը սկսեր էին դարնել: Կոտո-Հաճին, հսկիւն ու իրեն հետ եղած մարդիկ սկսեր էին քուչիւթիւ:

Մեր բոլոր զինուորները եկան ով. Վահանի առաջ եւ ըսին.

— Կամ էտոր զինաթափ կ'ընես, կամ մենք ըստորս ալ զինաթափ կ'ըլլանք, կը հեռանանք:

Մի կողմից ևս, միւս կողմից Գէորգը, Վա- դուրշակը, Վահանը զինուորներու միտքը խո- զազուցինք եւ Հաճիի զէնքը առինք:

Աշխրը եկաւ սար, նաև սովորական մի զունդ գորք՝ 800 հողի: Մենք զինացինք Տալուո- րիկի կողմերը, թագնուելով, թափառերով մնչեւ աշնան քոչերի դառնալը եւ կառավա- րութեան Մուշ վերադառնալը:

\* \* \*

Պ. Վահանին էտ ամառ տուինք Տիգրանա- կիրտի եւ Ֆարխինի մեր գործիչների անուննե-

րը, որոնց հետ սկսեց թղթակցութիւններ ընել: Եոյնը ըրինք նաև Դաշտի դիւղերու կեղծ ա- նուններու վերաբերմամբ. յայտնեցինք իրմ- րապիտներու անունները. անոնց հետ ալ սկը- սու թղթակցութիւն ընել:

Անան, ծիւն ընելու ժամանակ, Եկան Եր- կաթը, Հրայրն ու Եղորը: Մենք առանձնա- ցանք: Պ. Վահանը, Երկաթն ու Եղորը առա- ջարկեցին թէ՝ «մենք կը խնդրենք, զործի սի- րոյ համար, անցեալները վերեղման իջեցնէք և վրան խաչ մը զնէք»:

Հրայրը ըստ. «Երբ դուք կ'առողջարկէք՝ ևս ոչինչ չունիմ ըսելու»:

Ինձ ըսին. «Խսկ դու ի՞նչ կը մտածես»:

Ես ըսի. — «Այսական կայ ահազին ժողո- վուրդ, պ. Վահանի զախ ալ վեց ամիս է. նա բաւական ուսումնասիրած է, քննեցէք, եթէ մեղաւոր եմ, ինչ որ ընկերական դատաստանը վճաց, ուրախութեամբ կ'ընդունիմ»:

Նրանք ըսին. — «Մենք ոչինչ չենք ըսեր, թէ գուն ևս մեղաւոր կամ Հրայրն է մեղաւոր. մենք կ'ուղենք, որ անցեալները մտքէդ հա- նէք»:

«Ուրեմն, որ արդ չէք ըներ, — ըսի, — ես այսօտի տարի հոս եմ, հիւանդ եմ, յողնած եմ, թոյլ տուէք, որ հեռանամ արտասահման»:

Հրայրն ըստ. — «Եթէ դու հեռանաս, այն ատեն ևս քեզնից առաջ կը հեռանամ»:

Վահանը, Երկաթն ու Եղորը րոին. — «Ե- թէ գուք կը հեռանաք, այն ատեն մենք ալ պի- տի հեռանաք»:

Այդ մէր խօսակցութիւնները երկու օր տե- ւցին: Նրանք ամէն բան հասկցեր էին: Վեր- ջաւորութիւնը եղաւ՝ անցեալներու վրայ խաչ գնելը: Մեզ վեր կայնեցուցին, ինձ ու Հրայ- րին, համբուրուեցինք: Կանչեցին նաև Վա- դուրշակին ու Գէորգին, նրանք ալ համրու- րուեցին Հրայրի հետ: Կանչեցին հետս զանուած բոլոր զինուորներին, նրանց ալ առաջարկե- ցին թէ՝ «ահա! զործի եւ ընկերներու սիրոյ համար՝ Անդրանիկը, Վաղարշակին ու Գէորգը հաշուուցին Հրայրի հետ, երկու կողմից դի- ջումներ ըրին, մաքուր սրտով, բոլորս ձեռք- ձեռքի տուած, սրանից յետոյ, պէտք է դորձը առաջ տանենք»:

Հրայրը մէկ կողմ, ևս միւս կողմ, սկսանք

լալ։ Դրանից վերջը, մինչեւ Սասունի վերջին կոփաները, այլևս իրար մէջ ոչինչ չենք ունետած։ Զինուորներու մէջ եղեր են փոքրիկ խըզումներ, բայց շուտով առաջքն առեր ենք։

Եղորը եկած էր շուտ վերադառնալու պայմանով։ Թղթակցութեան գծերը որոշեցինք Բասենի եւ էրզրումի հետ։ Վերադառնուցինք եղորին Բասէն։

Այդ ձմեռ մենք մնացինք Կէլիկուզան։ Գէտրու որկեցինք Վան, Գիսակի քով։ Այդ ձմեռ ես շինեցի 37 հրացանի դողախ։

Երկաթը, Վաղարշակի եւ քանի մը ընկերներու հետ, զրկեցինք Դաշտը կազմակերպելու եւ ժողովրդի ինքնապաշտպանութեան համար զէնք զնելու։ 45 օր Դաշտը թափառելուց վերջը, նորէն եկան մեր քով։

Այդ ձմեռ բերեր էինք իմ նախկին զինադործը։ Հրացաններու բոլոր պակասները լրացուցինք։ Երկաթին, հինգ հոգիով, զրկեցինք Ավկաթ, ուր կը գտնուէին մեր 2-3 ընկերները։

Գարնան, գետերը բարձրացան, վերցրի հետո եւ գացի էվէրէքս, ուր շինեցի երկու փուռ, հասարակ քարերով, մէկը եփելու, միւսը՝ չորացնելու։ Մօտ 22 օր հոն մնացի։ 40 ջուալ չորսած պաշար պատրաստեցի եւ փոխադրել տուի երեք տեղի վրայ։ Այստեղից ելայ դացի Կէլիկուզան Հրայրի եւ Վահանի քով։

Սէմալցիք ու Կէլիցիք իրար զարկին, աղջիկ մը վախցնելու ինդրի մը պատճառաւ։ Նըրանց հանդստացուցինք։

Լուր եկաւ ինծի, թէ 20 հոգիէք բաղկացեալ ձիաւոր խումբ մը եկաւ Սէմալ։ Ելանք գացինք Սէմալ, տեսնուեցանք Թումանի հետ։ Խումբը բերինք Կէլիկուզան։ Նրանց մէջ կային իմ նախկին ընկերներս, 95-էն — Քեաւթառ Արշակը, Սեպուհ Արշակը (Սեպուհ Կեղծ անունն է), Դուրբախը (Ղարսեցի Յարութիւնը), Մուրասը։ Ուրախութիւնիս շատ էր, ամբողջ ժողովրդը ողեւորուցուցաւ։

Երկրորդ օրը Սալէ աղան ինծի լուր զըրկեց թէ՝ «60 հոգի ձիաւոր խումբ մը եկած է Սէմալ ու Կուռթիք, ահազին ձայն եկաւ. էսպէս բացարձակ բան կ'ըլլա՞յ. կ'ուղեն գլուխս կորսնցնե՞լ»...

Անցաւ 3-4 օր, Կէլիկուզանէն անցան Ալուշակ։ Յարութիւնը, Դուրբախը, Սրդէն ու Ե-

դորը վերադարձան։ Նրանց Տանտալարէ գրինք (Հետերնին հինգ ձի վերցրէն), իսկ մենք, մեր ուղմամթերքը, թէ՛ հայ, թէ՛ զամապան ու տելիք, փոխադրեցինք Կուռթիք։

Կուռթիքին մինչեւ Սիսոր-Քար Դիրքեր շինել տուի։ Տպայոց մեծամասնութիւնը հոն էր, փոքրամտանութիւնը՝ զամապան դործերով այս ու այն կողմու էր զրկուած։

Անցաւ քանի մը ժամանակ։ Տափլկայ քիւրտ ոստիկաններէն երկու գող զրկուած էին, մեր ձիերէն գողնալու։ Մէկին անունը Խամաթօ\* էր, միւսինը՝ Հասան։ Երբ զրանք կը մօտենան Սիսոր-Քարին, մեր պահապանները կը բոնեն զրանց։

Լուրը հասաւ ինձ եւ Հրայրին։ Գացինք հարցացնեցինք։ Քրտերը ուղիղ չէին խօսել, կ'ըսէին։ «Պիտի երթայինք Խաննք, ճանաւ ողարհէ կորսնցուցինք, Եկանք, հոս ինկանք»։

Խալիթօն էտ տեղերից հազար մակամ անց ու զարձ էր ըրեր։ Հինգ օր վերջը տուինք մել քանի մը տղայոց ձեռքը, որ տանեն Մովկասար, քոչերի մէջ, սպաննեն ու գան։ Քոչերը էտ ատեն Մովկասար կը դանուէին։ Ոստիկաններու զէնքերն ալ հետերնին զրկեցինք ու ըսինք։ «Քրտեր, ձեղ պիտի տանեն այսինչ քիւրտի քով, որպէսպի նա ձեղ համար երաշխաւոր լլայ, ձեղ թողնելու համար»։ Իսկ տղաներուն պատուիրեցինք, որ հրացանի գնդակով զարնեն քիւրտերը։ Տեղբքը գիշերով զարկին, վերցուցին հրացանները, ու եկան։

Բատրանցի քիւրտերը առաւոտեան կը տեսնեն այդ դիակները, կը վախնան թէ կառավարութիւնը իրենց պիտի վերագրի սպանութիւնը, կը տանեն կը պահեն։ Սալէ աղան ինծի լուր զրկեց թէ՝ «կը խնդրեմ, որ էտ երկու մարդուն ուղարկիս, քովիս բինբաշին ինծանից դաղանի զրկեր է, ես տեղեկութիւն չունեմ։ Ասծու սիրուն, իմ խաթեր համար, չսպաննես, զրկես»։ Ես պատասխաննեցի թէ՝ «նրանք իրենց արժանի պատիժը կրեցին, այլևս չինդրուես»։

\* \* \*

1903-ին երկու թարուր դօրք (1000 հոգի)

\*) Գիւղաշէնի կոռից վերջ, Խալիթօն, Տանիքայ Զաթօի հետ, զացած սպաննած էր Սէմալայ Բիղիրիզի տան թօրօն։ ԱնԴՐ.

և երեկոյեան ճանապարհ ընկանք դէպի լիմ անապատը:

Մուժը քալեցնողը և հաւաքողը ևս էի: Բաւական տեղ գացինք, ճանապարհը սկսաւ անայ ծովու եղերքէն զնալ: Մեր վալազները ըսին թէ՝ հս բասան ցանող պարսիկներ կան: Տղերը կարգու կը քալէին: Տեսանք երկու ան յարձակուեցին մեր վրայ, պարսիկներն ալ յանելից եկան: Մօտեցան մի 50 քայլի վրայ: Ես պոտացի տաճկերէն.

— Եթրե՞ր, չէ՞ք տեսներ, որ զօրքի կ'անցնին, չները բոնեցէ՞ք: Մամատ չաւուշ, բայ բնկերոջն ձեռքը բաներով, վուրմա՞:

Երանք վախնալէն անմիջապէս չները ըըռնեցին և չդիմացան մեր ով ըլլալը:

Արդ օրը ճանապարհնիս շատ երկար էր: Վալազները, որ ինձի հետ ընտելացած էին, կ'ըսէին:

— Աստուծու սիրուն, թո՛ղ աղերքը քալէն, վրանիս կը լուսնայ, զաշտի մէջ կը մնանք:

Ես բաի խմբապեաներուն, թէ վալազներն էսով և կ'ըսէն:

Ես և Դատանցի Աշոտը միշտ վայագի հետ առաջ կ'երթացինք, միւսնոյն ժամանակ յետ կը վերապանայինք, կը խնդրէինք աղայոց, որ ամփափ եւ արագ քալէն:

Աղօթարանը արգէն բացուաւ: Դեռ ունէ-իք մէկուկէս ժամուան ճանապարհ: Խումբը շատ էր կարուած: Հոգ կար հայ զիւղ մը, որի ոհունը մոսցիր եմ: Վերապարձայ, տեսայ՝ Դորդէնը ամէնքիս վերջն է: Բոի.

— Փոխանակ գու քալելու, եւ աղայքն ալ պալեցնելու, զու յետ ես մնացեք:

— Քալում եմ, էլի՛, հոգի՞ս ես առնում:

Ես նորէն առաջ վազեցի, հասայ Աշոտին: Տեսանք՝ մարդ մը կուզայ զէպի մեզ: Թագնը-Եցանք եւ երբ մարդը եկաւ, մենք բանեցինք:

— Եօ՛, զու Փրյէյ զուրմանջ, — Հարցուց Աշոտը:

— Ֆրլէյ, — ըսաւ վախեցած:

— Հա՞ հանչէ՛, թող դայ:

Ծնկերը եկաւ, նրան թողուցինք վերջը մը-նացող պայտոց, որ նրանց զիւղը տանէ, իսկ

մենք սկսեցինք արագ քալելէն վերջ, հասանք վանքի դրսի տունը: Անմիջապէս ծովու եղերքը կրակ վառեցինք (վանքի եւ դրսի տան պայ-մանն է, որպէսզի ներսէն նաւ մը ուղարկէն): Նաւը եկաւ, լցուցանք մէջ ու դացինք լիմ ա-նապատը: Մեզի յետ էին մնացած 9 ընկեր, ո-րոնց մեր թողուցած հայ տղան տարեր էր գիւ-ղը եւ առանց ոչ ոքի լուր տալու, տեղաւորեր էր մարազի մը մէջ, բերեր էր նրանց հաց եւ ջուր եւ երեկոյեան մութ տալուն՝ ընկեր ա-սացնին բերեր էր ծովեղերքը:

Արդէն մենք նաւը նստած պատրաստուած էինք: Նրանք ալ եկան մեր քով: Երկորդ օրը հարիւր ձիաւոր եկած խուզարկած էին այդ զիւղը, մի քանիսն ալ շարչարած, բայց զա-տարկածնոն վերապարձած էին: Մատնութիւն չը կրնար ըլլալ, որովհետեւ բացի վերոյիշեալ աղուց ոչ ոք չդիմէր մեր տղաներու հոն եղած ըլլալը:

\* \* \*

Մենք երկու օր նստեցինք լիմ անապատը, ապա վանքի փոքր նստով զացինք դէպի կտուց անապատը: Նաւն ունէր երկու նստասի, մէկ զեկալար: Մենք ալ 43 հոդի էինք մեր ունեցած սովորմթերքով: Նաւը՝ փոքր ըլլալու պատ-ճառուած՝ կը արշին ջրից բարձր էր մնացած: Մինչեւ զիւղերուան ժամը չորսը յաջող քամի կար՝ կտաւով կ'երթացինք: Բայց նրանից վեր-ջը քամին զալարեց եւ երկու նստասիներ սկսեցին թիավարել: Այդ երկու մարդու թիա-վարելով հաղիւ երկորդ իրիկուն հասնէինք կտուց անապատը: Ամբապեալ հարցուց:

— Տղէրք, մեր մէջ չկա՞ն թիավարողներ:

— Պոյիս մայունաճութիւն բրած եմ, — բ-սու վանեցի տղայ մը:

Բայց մենակ նա չէր կրնար թիավարել, ընկեր մ'ալ պէտք էր:

— Անդրանիկ, — ըսաւ ինձի Սիմոն, — չէ՞ դուն ալ Պոլիս մնացեր ես, զու կը զիւնենաս:

— Չեմ զիւներ, — ըսի քմծիծաղ ընկելով:

— Դէհ, հանուէ՛, հանուէ՛, ես զիւնեմ, որ զիւնես:

Երբեմն փոքր ալիքներէն նաւը կը տարու-րերուէր: Մեր աղայոց մէջ ծովուց վախեցող-ներ կային: Արեւը ծաղեց եւ ցորեկուան ժամը

չորսին միայն կրցանք հասնիլ կտուց անապա-  
տը:

Միաբանութիւնը տեսաւ մեզ եւ վարդա-  
պետները վաղեցին եւ «բարի էք եկեր» ըսելով,  
մեզի ընդունեցին եւ տարան վանքը: Մեր նաւը  
յիտ դարձաւ:

Այդ օրը մի տաճկական տօն էր, Վանի մէջ  
թնդանօթներ կարձակէին: Կղղիի մօտակայ  
դիւղերու կին երեխայ հաւաքուեր էին կղղիի  
գիմացի ցամաքը, որովհետեւ թնդանօթներ  
արձակելու պատճառը չէին գիտեր: Նրանք գի-  
տէին, թէ վանքի մէջ կուր եւ կոտորած կայ:  
Արշաւանքի լուրը արդէն տարածուած էր:

Վարդապետները կղղիի գիմաց հաւաքուած  
ժողովուրդը ներս չառին, մտածելով, թէ կա-  
րելի է մատնութիւն ըլլայ:

Կէսօրը անցած էր՝ եկաւ մի մեծ նաւ եւ  
կանգնեցաւ ափին:

— Սա, զիտէ՞ք, էն նաւն է, որով եկած է  
Ախլաթէն Վան Շաքիր փաշան,— ըսին մեր  
վարդապետները:

Նաւավարները եկան մեզ տեսան:

— Նաւի տէրը ո՞ւրտեղ է,— հարցուցինք  
մենք:

Նա Վան է. կառավարութիւնից թուղթ մը  
պիտի վերցնէ, երեկոյեան նա ալ կուգայ:

— Ո՞ւր պիտի երթաք:

— Ֆըլլատան (այսինքն՝ Արճէշ), զօրքին  
աղ բիրելու:

Մենք քանի մը տղայ վեր կեցանք, դացինք  
նաւի ղեկը վրայից վերցրինք եւ բերինք մեր  
քով, որպէսզի չփախչէն: Երկոյեան ղեռ մութ  
չեղած՝ եկաւ նաւի տէրը: Վանեցի հայ մըն  
էր:

— Ա՛յ մարդ, ըսինք, մեզ պիտի տանես  
Ախլաթ:

Նաւատէրը լաց ու ողբում սկսաւ թէ՝

— Ես պիտի երթամ կառավարութեան աղ  
բերեմ:

— Լաս, չլաս,— ըսինք,— օդուտ չունի,  
ոէտք է տանիս:

Վաղդէնն ու Միքօն դրինք վանքի փոքը  
նաւակի մէջ եւ «Զայն տո՛ւր, ո՛վ ծովակ» եր-  
գելով՝ ճանապարհ դրինք դէպի Վան:

Կղղիէն միւս ցամաքի հեռաւորութիւնը  
կ'ըլլայ մօտաւորապէս 600 քայլ: Նրանք ելան  
ցամաք եւ շարունակեցին իրենց ճանապարհը:



ՍԵՐՈԲ ԱՂԲԻԻՐ

Մենք ալ (ընդամէնը տաս հոգի) լցուեցանք  
այդ մեծ նաւի մէջ: Նաւատէրը չէր ուզում զար  
ներս: Մենք բոնեցինք թեւերից եւ ներս քաշե-  
ցինք:

Մինչեւ լուսաբացը յաջող քամի էր, իսկ  
լուսաբացին դաշտարեց: Դեռ բաւականին ճա-  
նապարհ ունէինք: Նաւատէրը մինչեւ լուսա-  
բաց մեզ հետ չխօսեց: ղեկը բոնած էր: Յետոյ  
սկսեց կամաց կամաց Վանի մատնիչներու ա-  
նուն տալ: Մենք կը թիավարէինք, բայց նաւը  
մեծ ըլլալու պատճառաւ արագ չէր երթար:

Մօտեցանք կծւակ գիւղի քարին եւ ելանք  
ցամաքը: Նաւը յետ դարձաւ: Նաւը ութ ժա-  
մէն պիտի հասնէր Արճէշ, դացեր էր քամի չըլ-  
լալու պատճառաւ երեք օրէն: Վանէն հեռագիր  
եղած էր թէ՝ նաւը կուգայ, այսքան աղ յանձ-  
նեցէ՞ք: Մարդուն կը հարցնեն՝ «երեք օր երեք  
դիշեր ո՞ւր մնացիր» ու կը սկսին չարչարել:  
Կ'ըսէ.

— Այսինչ տեղը (ուր անմարդաբնակ է,  
էլ վանքի անունը չի տար) նաւը կապած էի,  
40 ֆետայիներ, որոնք բոլորն էլ նաւալարներ  
էին ներս լցուեցան. շատ ընդդիմացայ, ոչինչ  
չօդնեց:

— Ո՞ւր գացին, ո՞ւր ելան:

— Կծւակայ քար ելան:

Հեռագրով այդ լուրը կը հաղորդեն Վանի  
կուսակալին: Ան ալ հեռագիր կուտայ Բաղէշի

Անրորն բառ։

«Դուք ինչո՞ւ համար պիտի հեռանաք. ևս կը հեռանամ»։

«Դու չես կրնար հեռանալ, որովհետեւ պատասխանառուութիւնը քեղ վրայ ծանրացած է; Մենք կը հեռանանք. դու կը հեռանաս չես հեռանայ՝ քու կամքդ է»։

Մենք հեռացանք, նա մնաց հոն։

Մեր քով կար 20 կոտ ալիւր, որը քիւրդերու պատճառաւ անտառի մէջ պահած ունէինք: Սերորի զինուուրները ման կուզան, կը գանեն այդ ալիւրը, կը տանին եւ կ'ուտեն, որովհետեւ իրանք ալ չունէին։

Ես մնացի բուշերու տակ մինակ, անտէր անպաշտպան, երբեմն մէկ ընկերս քովս: Մէջ-քիս ցաւի պատճառով թեւերիցս վեր պիտի առնին տանէին ջուր թափելու: Մինչեւ գնալ գալս, յանկարծ կը սասականար մէջքիս ցաւը՝ ձայնս երկինք կը հասնէր։

Սաբայի հետ շատ թղթակցութիւններէ վիրջը՝ նա մեղ զրեց. «Տզե՛րք, ընէք եղ երեք մարդ զործի սիրու եւ հաշտուէ՛ք, միացէք իրարու հետ: (Այսինքն՝ մոռանանք Աւոյի եւ իր կոնջ սպանութեան զործը եւ հաշտուինք Սերորի հետ): Ես ինքս արդէն անդամալուծի պէս էի, մնացած ընկերներս ալ կը թափառէին է բոլոր մանրամասնութիւնները։

Առաւօտ լուսացաւ: Գիւղացիք հաւաքուեցան զանազան տեղերուց: Զարնուած ատեն կինը պոռացեր է՝ «էրիկս Բղդօն զարկաւ», որովհետեւ օր մ'առաջ Բղդոյի եւ Սենոյի մէջ լիզուակու էր եղած։

Նոյն զիշերը ես ու Յարութիւնը Խաչոյի տունն էինք: Աւգիարմու տէրտէրն ալ հոն էր: Առաւօտ ժողովրդի մէջ լուր կը պտտի թէ սիրմալուի զնդակ է: Ես, ընկերս, Խաչոն, տէրտէրը զացինք զեակի վրայ: Գնադկի մէկը

ժողովրդի մէջ: Մշոյ քոչերը եկած էին սարը: Ինչպէս ամէն տարի կուգային՝ զօրքը եկած էր Դանէլ:

Կառավարութիւնը զիտէր, որ Սերորը Սասուն է, բայց չգիտէր թէ ո՞ւրաեղ է: Նա (Սերոր) զրեթէ մինչեւ աշուն մնաց Կէլիկուղան: Իմ ցաւս տեւց 17 ամիս: Ընկերներս եւ ժողովրդը, նաեւ մշեցիք ինձնից յոյսերնին կրտսած էին: «Սախաթ է, անդամալոյժ եղած է», կ'ըսէին: Սաքօն հեռուէն քանի մը դեկ ցոյց տուաւ: Բրի, բայց ոչինչ չհասկցայ: Տեղական ժողովուրդէն որը որ ինչ կըսէր՝ կ'ընէի. էլի օգուած մը չտեսայ: Նստած տեղիս մինչեւ վեր կայնէի՝ տասը բոսէ պէտք էր եւ ան ալ պուալով։

Օր մը ես մինակ թտան կը գտնուէի: Խոտ մը կայ, որուն կ'ըսւն քեղի տակ: Իրեւ զեղ խորհուրդ էին տուեր եւ մէջքիս կատկեր այդ խոտը: Մէկ ժամ հաղին կրցայ դիմանալ: Երկութիւ ցաւը (մէջքիս եւ զեղի պատճառածը) սարսապիելի էր: Վեր առի, նետեցի այդ զեղը:

Այդ բոսէին մի աղայ, որ անդէն Սերորի քով կը մնար, տոմսակ մը զրաւ ձեռքս: Տոմսակը զրուած էր Սերորի կողմէն այսոպէս.

«Անդրանի՛կ, ես կը գտնուիմ Տաղւըրնի տակը՝ ընկուղի քովը, եկո՛ւր խօսանք: Նորէն

փորն էր մնացեր, մէկը թաղիքի վրայ: Ես հարցուցի՝ ո՞ւր է զնդակը: Մենոյի աղան՝ Գիրօն հանեց զնդակը, ես ալ հանեցի մէր բերդանկի զնդակ ու բաի. «Հայե՛ր, տեսէ՛ք, էս զնդակը ո՞ւր, էս զնդակը ո՞ւր»: Բոյին: «Չախմախլիի զնդակն է, էն չան վաստակն է զարկ եր ու փախեր»:

Ննջեցեալը պատրաստ էր գերեզման տանելու: Կը սպասէին Սենոյի եղբայր ոէս Խէ-չոյին: Խտանցիք եկեր գերեզմանը կը փորէին: Ոէս Խէ չօն եկաւ, անսաւ իր եղբօր դիսէկը, պոռաց իր երիտասարդներուն: «Մինչեւ երկու հողի խտանցիք չսպաննէք՝ եղբայրս գերեզման չի գրուիր»: որովհետեւ Խզրոն երկու օր Խտան իր աղդականների մօտ մնաց: Ոէս Խէ չոյի մէկ եղբայրն ալ հէնց այդ տան աղջիկն էր առած, եւ կասկած ունէին, թէ Սենոյի սպանութիւնը էղոնք են լրտեսած:

կրնաս երթալ : Դամաթ մը թութուն դրկած եմ քեզ, գրարերէս կը ստանաս :

Նա գիտէր դրութիւնս, եւ ես պատասխանեցի :

«Ես ջուր թափելու դուրս չեմ կրնար երթալ՝ ի՞նչպէս դամ : Եթէ կարելի է դուն եկուր» : Նորէն կրկնեցի . «Ժողովրդի մէջ կան վատեր, քեզնից ինծի կուգան կը խօսան, ինձնից քեզի կուգան կը խօսան՝ չլսե՞ս» :

Այդ ատեն քովս կը գտնուէր կէս կոտի չափ ալիւր, քիչ մ'ալ աղ . ուրիշ ոչինչ չունէի : Խըտանայ Ըործո-տուն և ծէրօ-տուն մի մի անդամ ալիւր կը բերէին եւ հոդ կը տանէին ինծի : Նամակ մը զբեցի Հրայրին թէ՝ «գուն եւ երկու մարդ Դաշտէն կամ Մշու կոմիտէն եկէք, այս խնդրին վերջ տուէք» : Նա պատասխանեց . «Վարդավառի կիրակի օրը բոլորդ կը գտնուէք կէլիկուղան : Պիտի դանք» : Այդ օրը բոլորս հոն դանուեցանք : Բայց չեկան :

Հրայրէն նամակ մ'առինք թէ՝ «ընկերներ, ահա նամակ մը ձեզ զբեցի, նամակ մ'ալ Սերորին կը զրեմ : Դուք ձեր հաշուով ապրեցէք՝ նա էլ իր հաշուով ապրի : Ես չեմ կրնար դալ, որովհետեւ քոչերը սարն են : Կ'ուզեմ դիակս թուշունները ուտեն, չեմ ուզեր անդամ մ'ալ էդ դաղաններով ձերբակալուիլ» :

Մնացինք այդպէս : Տալւորցիք պարզապէս ըսեր էին այդ աղջկայ փախցնելու ինդրի վերաբերմամբ թէ՝ «չենք ընդունիր, որ Սերորը մեր մէջը դայ» : Հազմանցի (Տալւորի թալ) Զաքարը, որ ամուսնացած էր Զիարէթցի աղջկան մը հետ՝ տանը կը գտնուէր : Դաւինցի մի մարդ մատնած էր թէ՝ թէկմոյի սպանու-

թիւնը կատարուեր է Զաքարի եղայրներու միջոցով . մատնութեան ատեն նոյնիսկ ըսեր է՝ Ձուրո-Պետրոսը թէկմոյին տարաւ իր խուլը եւ Սերորը ինքը սպաննեց :

Թէկմոյի աղդական քիւրդ Նըհամօն տալ-ւորցոնց մի քանիսի աղան էր : Գիշեր մը կը վերցնէ 17 քիւրդ եւ կուգայ Զաքարի քէօչքի բոլոր : Մաս մը կը կանգնեցնէ ճանապարհներու վրայ, մաս մը կը վերցնէ հետը եւ կը բարձրանայ տանիքը : Զաքարն եւ իր կինը տանիքը քնացած են եղեր, եւ Զաքարի ոտքը քէօչքի յատեւեց տանիքի վրայ դուրս կ'ելլէր : Կինը կ'արթննայ եւ «Զաքա՛ր, Զաքա՛ր» կ'ըսէ : Քիւրդերը կը հասնին եւ կը սկսին խանչալով զարնել : «Էս վրէժը թէկմոյին է», կ'ըսնեն քիւրդերը, կը սպաննեն Զաքարը ու կը հեռանան : Կինը կը սկսի պոռալ : Հաւարը կ'ըսնին Տալւորցոց թաղերը : Հոդ կը հաւաքուին, կը սկսուի հրացանաձգութիւնը : Քիւրդերը կ'անցնին Դրւաղենց զիմացի սարը, շայլիսի մը կ'ըսնեն (ուրախութեան հրացաններ կը խիեն) ու կ'երթան :

Զաքարի հօրեղբօր տղան՝ էրիկ ունեցող կինը փախցնելու համար հող, տունը տեղը թողած փախեր էր 15 տարի առաջ Խիանք : Նրան կը հասկցնեն, թէ՝ Ձուրո-Պետրոսի համար սպաննեցին քո հօրեղբօր տղայ Զաքարը : Նա Նըհամօն շատ լաւ կը ճանճնար : Կը վերցնէ հետը քիւրդ մը եւ երեկոյեան մութ ատենները կ'իշնէ Տալւորի գիւղը : Ձուրո-Պետրոս էդ իրիկում հրացանը ուսին կըլկըլ կը ծրէր (Ծուրէ կարգը իրեն էր) : Զեռքի ձիւթը վառած՝ արտի մէջ ջուրը կը նայէր : Տանիքի կտուրից կը զարնեն կը կպնի թեւեին, կը վիարւորուի : Զարնողները կը փախնին :

Ձուրո-Պետրոսը մէկն ալ ինքը կը զարնէ : Նա հայերու եւ քիւրդերու մէջ անոն ունէր իբրեւ քաջ : Սպաղանաց Մակարը աղոր քրո՞ էրիկն էր : 7-8 ամիս առաջ Սերորը կարգադրուած էր, որ Մակարն ու Պետրոսը Տալւորիկի բոլոր թաղերու գործը նային, բայց ժողովրդի համաձայնութիւնը առած չէր : Ձուրո-Պետրոսը իր տղու համար փախցրեր էր Տալւորցի աղջիկ մը : Այդ եւ ուրիշ պատճառներով ամեն մէջ կատար էր աղջիկ էր :

Այդ լուրը իմանալուն խտանցիք կը թողուն գերեզմանը եւ կը փախնին : Տէրտէրները, ժողովուրդը մի կերպ համոզեցին ուսի Խէջօն եւ ըսին . «Եթէ աղոնց մատնութիւնը հաստատուի, մենք կը սպաննենք հէնց այդ երկու մարդը» եւ բարձել կուտանք մեր գիւղէն» :

Այդ ալ այդպէս անցաւ : Միայն աւելցնենք, որ երբ Խզոն Խտան մտեր էր՝ իր հօր ուտները տեսներ էր գերեզմանից դուրս եւ որդենոտած : Այդ տեսնելով՝ տղան ալ աւելի կատար էր :

ԱնԴ.

կուսակալին թէ՝ «ձեր կողմը անցեր են 40 ֆետայիներ»:

Մենք երբ կծւակայ քարր ելանք (կծւակայ քարր սար մը է, որ իրեն քիթք երկարացուցած է ծովու մէջ՝ սարի ստորաները ծիրանի պարտէ զները կը դանուին), քիչ մառաջ զացինք: Երկու հոգի քիչ մը մասնցանք պարտէ զներուն: Հոն անոնին մարդ մը: Աշոտը ճանչցաւ էղ մարդը, կանչեց: Մարդը եկաւ մեր քով: Գրեթէ լույսը ալ կը ճանչնայինք էղ մարդուն, նա ալ մեղ կը ճանչնար:

— Գիտէք, ո՞ւր է Սերորը, — հարցուց Սիմոնը:

— Ես չդիմում, կարելի է դիւղի խմբապետը զիտնայ:

— Դէ՛մ, ուրեմն էս նամակ կ'առնես կը տանես զիտղի խմբապետին, որ նա ո՞ւր որ ալ ըլլոյ Սերորը՝ զրկէ նրան:

— Շատ լա՞ւ:


— Մեղի ալ հաց կը բերես:

— Շատ լա՞ւ:

Մէկուկէս ժամ չեղած, մարդը բերաւ մեղի հաց, մածուն, ձուածեղ, ծիրան: Երեկոյեան մութ տալուն՝ զացինք կծւակ զիտղը: Երեկոյեան ժամը հինգ կ'ըլլար՝ եկաւ Սերորը իր 15 ընկերներով:

Երկու օր հոգ մնացինք, երկու օր ալ զացինք Ծղակ՝ հոն մնացինք: Բաղէ չէն լուր հասու մեղի, թէ խուզարկութիւն ոլիսի բլլայ: Մէնք բարձրացանք Նէմրութի ստորաները: Բաղէ չէն ևս Ալիսաթէն 300–100 զօրք երկու կողմէն խուզարկեցին, բայց ոչինչ չզտան: Մէնք բարձրից կը տեսնէինք նրանց: Երկորդը օրը վերադարձան իրենց անդերը:

Բաղէ չի կուսակալը հեռազիր կուտայ Մշոյ մութէսրիփ Մուսաաֆա փաշային, թէ՝ 40 հոգի Փետայիներ եկած են ձեր կոզմերը՝ երած Սասուն: Նա կը կանչէ Մշոյ Ալանցնորդ Վարդան վարդապետին (սրանք իրարու բարեկամ էին) եւ կ'ըսէ, թէ 40 Փետայիներ զացեր են Սասուն: Վարդան վարդապետը կ'ըսէ, թէ՝ ես չեմ յուսաք էղպէս բան եղած բլլայ»: Նա գաղտնի կը կանչէ Սասունի ոչնոներուն եւ կը հարցնէ՝ «իրաւ խումբ մէկե՞ր է»: Սասունցիք շատ կը սիրէին Վարդան վարդապետին եւ նրանից զաղանիք չէին պահեր: Նրանք կ'ըսեն, թէ



Մշոյ Ս. Կարապետի վանքի վանահայր  
ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԸ

մարդ մէնկած չէ: Եւ իրաւ, մէնք Ալալալի դիւ-  
ղերն էինք:

Գուրղէնը ժամանակ մը Ալալալի զիւղերը  
ման զալէն վերջը՝ գնաց Բա էջ, հոն կազմա-  
կերպութիւնը անելի կանոնաւոր հիմքի վրայ  
դնելու:

Ես կը զանուեի կծւակ: Գիւղալիք զողցեր  
էին երեք չորսի, երկու ձի, որոնք վատ քիւրդե-  
րու կը պատկանէին:

Լուր եկաւ թէ խուզարկութիւն ոլիսի բլ-  
լայ: Սերորի Եղրայր Քրբայի հետ արդ երեք  
չորին ու ձին ատրինք սարը: Հոն ես ծանր հիւ-  
անդացաւ: Գիւղալիք ինձ տարին կծւակ՝  
պատկեցուցին: Երանք թէ յատրասաեր էին  
ինձ համար, նստեցուցին, որ խմեմ: Խելքս  
զիւղցս զացած էր: Անդիտակցարար հոացած  
ջուրը ամրադըր մէկն խմեցի: Երանս էրուեր  
էր եւ ես ոչինչ չեմ զզացեր: Այդ չորիները ու  
ձիւրիք մասպիք էին Սասուն զրկել, սակայն,  
զիւղցիք չեն կրցեր պահել եւ բաց են թողու-  
ցեր: Այդ անասունները կ'ընկնին Դատուանի

Գորդօնի ձեռքը: Քրդերուց 15-20 արժաթ  
կ'ունեն եւ կը յանձնեն իրենց:

Հիւանդութիւնս տեսեց քաան օր:

\* \* \*

1895-էն մինչեւ 1897, Սերոբի կոհմերը:

95-ին Սերոբը կոուած է մի ժամ ուստածական սահմանը անցած ատեն (Դալիքաբայի գիծ): Աշոտ-Թաթուլը իրեն հետն է եղած: Աշոտ-Թաթուլը մնացած է Բասէն, իսկ Սերոբը իր խմբով խնուսցի վալադ Աւազի առաջնորդութեամբ անցեր է Խնուս:

Հետերնին կ'ըլլան երեք այլ խնուսցի տըղաներ: Սերոբը 12 ընկերով եկած է Կծւակ: Բաղէշի կոտորածէն օր մը վերջ հասած է Սոխորդ գիւղը: Նոյն օրը եկած են Սոխորդի վրայ Մշոյ դաշտի Զուխուրի քիւրդերը մօտ 300 հոգի: Կոփեր սկսուած է գիւղի 24 չախմախլաւորների հետ միսպին:

Երրորդ կոփեր ունեցած է Սերոբը ինքը մենակ, 96-ի ձմեռը: Շամիրամէն երեք ժամ հեռու գիւղի մը մէջ կ'ըլլայ, երբ Ավլաթէն լուր կը զրկեն թէ՝ «մատնուած ես, եկան քեզ վըրայ»: Դեռ լուրը չառած՝ 2օ ոստիկան եւ յիւնապետ մը կը հասնին գիւղի եղերք: Նա կը վերցնէ իր հրացանը եւ կ'ուղէ աննկատելի կերպով գիւղի կողքին դանուած հովիտով վեր բարձրանալ: սակայն, կը նկատեն եւ, Սերոբը, ստիպուած կը դառնայ եւ կը սկսի զարնել: Այսպէս կոուելով Նէմրութ կը բարձրանայ:

Զիւնը շատ է եղած եւ ցուրտ: Դեռ զագաթ չելած՝ մշուշ կը պատէ իրեն եւ զօրքերու մէջ. ո'չ ինքը զօրքերը կը տեսնէ եղեր, ո'չ ալ զօր-

քերը իրեն: Սարի զագաթով Սերոբը կ'երթայ Շամիրամ: Հոն հասնելուն, ժողովուրդը չորերը կը ցամքեցնեն եւ Սերոբը քիչ մը կը հետանայ: Զիւնի եւ ցրտի պատճառաւ աչքերը կը ցաւէին:

Այդ գիշեր լուր կը զրկեն Սոխորդ եւ փամփուշտ կը բերեն: Սերոբը իրեն կը դնէ զահուեկի մը վրայ (սահնակ) եւ Շամիրամէն կ'երթայ Զրհոր: Զրհորցի երկու մարդու գիտութեամբ՝ անկողին, վերմակ կը վերցնէ եւ գիւղէն վեր Գրգուռ սարի սարորուը քարայր մը կայ, հոն կը մնայ քանի մ'օր:

Սերոբը, խաղաղուելուց վերջը, տեղական քանի մը ընկերներ կը հաւաքէ — Բաղէշցի Սիմոն, որ Շէկոտան հայն է, Խնձորեցի Նատօն (այս Նատօն 90-ական թուականներուն Տամատեանի հետ եկած է Աթինայէն Հալէպ-Դիարբէքիրի գծով Սասուն, ուր շատ քիչ կը մնայ եւ կ'երթայ իր գիւղը), Ուռթափցի Կրպօն, Կծւակցի Աւագը, Տափալանեցի Հասօն, Բաղէշցի Մուշեղ:

Օր մը 97-ի գարունը կը պատահեն Ծղակ գիւղը: 2օ ձիաւոր Հասնանցի Համիտիէներէն կուզան այդ գիւղի ոչխարը տանելու: Սերոբը դուրս կուզայ իր ընկերներով կը սկսի զարնել: Կոփեր կը վերջանայ առանց ուեէ կողմին մնաս հասցնելու: Քիւրդերը կը հեռանան առանց թալանի: Նրանից վերջը կը պատահին երկու քիւրդի եւ կը սպաննեն զրանց:

Մինչեւ 1897-ի մեր հոն գնալը Սերոբը ունեցած էր այս կոփերը:

(Շարունակելի)



բորբ սրուշեր է մեզ վրայ իշխանութիւնը ընողը  
Զուրօ-Պետրոսը և Դոնի-Մակարը. մենք եր-  
բեք չենք ընդունիրա:

Վիրաւոր Զուրօ-Պետրոսը կը տանին կէ-  
լի ուղան ոչ Աւելի տուն, որպէս վիրարոյժ.  
բայց քանի մը որ ապրելին վերջ մեռաւ:

Զուրօ Պետրոսի գարնուիլը վերադրեցին  
Դէսրին և Յարութիւնին՝ թէ այսինչ մար-  
դի ահենք են փախնենին: Այդ բանին Սերոր  
ինքն ալ հաւասացած էր:

Մշոյ Դաշտի Տէրկէվանցի պ. Վարդանը  
և կարնեցի պ. Մկրտիչը և կան Սասուն՝ մեզ  
Հայութիւնիւու համար: Կանչեցինք Ենոնց, ո-  
րոնք կ'ըսէին, թէ Դէսրդն ու Յարութիւնն են  
սովորներ: Վարդանն ու Մկրտիչը առանձնա-  
ցացին էզ մարդիկը և քննեցին: Էնոնք բա-  
ցարձակ պոստացին: «Մեր բերնէն այդպիսի  
խօսք երբեք չէ ելիք, ո՞վ է այդ զրաբարտու-  
թիւնն ընողը»: Պ. պ. Վարդանն ու Մկրտիչը  
չերցան մեզ հաշակցնել: Տղերը ըսին՝ «բո-  
չէր զանալուն, ճանապարհը բացուելուն՝  
մենք կը հնուանիք բոլորս»:

\* \* \*

Այդ ասրին կառավարութիւնը իր կեանքի  
մէջ էզչափ փող չէր հաւաքած Սասունին: Աչ-  
խոր, տաւար, պղնձեղին ծախելով կէս զնով՝  
100 սոկի տարաւ Տալըորիկէն, 160 սոկի կէլի-  
կուզանին, 70-ական սոկի Ախողիկն, Շէնըքէն  
և Ակմալէն:

Դէսրդ, Դաղար, Համբարձում և Սիմոն  
դացած էին Դաշտ. Յարութիւնը, Թորօն զա-  
ցա էին կէլիկուզան. Քովս կը գանուէր Քոփ  
Վիրաւորուալ եւ ամիս մը վերջ մեռնող Կարա-  
պետի եղբայր Սարգիսը: Ես կը գանուէր Միսի-  
թար:

Յարութիւնը ոչխար մը մորթեց և մորթը  
քաշեց վրաս, իսկ ինքը զնաց Կեալին (Կէլի-  
կուզան): Ես մինչեւ տաւար էզ մորթի մէջ  
քրանեցի, ջուրերու մէջ էի: Ազօթարանը բաց-  
ուած, զրեթէ լոյս էր: Սերորը 15 ընկերով  
ներս մտաւ տնից: Մորթը իմ վրայից վերցրած  
էին ձգած էի: «Էս ի՞նչ հոս է», ըստ Սերորը:  
Աւոյի երկու աչքէն կոյր կինը ըստ: «Պարոն  
Յարութիւնը Ս. Կարապետէն մատաղ մը մոր-  
թեց Անդրանիկի համար, միսը Գողովրդին ար-  
ևց, փոստը (մորթ) Անդրանիկին քաշեց: Դրա

հոսն է»: «Դէ՛, հեռացուցէք էզ փոստը, ը-  
ստ Սերորը: «Աստուած ընդունելի ընէ, Անդ-  
րանիկը: «Ծնորհակալ եմ, պարոն», ըստ Սերո-  
րին:

Արդէն անդերը փոռւած նստած էին: Ես  
պատկած էի օջախի ձախ կողմը: Հրացանս ու  
փամփուշտներս կախուած էին Սերորի զիսու  
վերեւ: Ես սիրահարուած էի էզ հրացանին,  
սուրբի պէս կը պաշտէի: Գուրդէնն ալ կը սի-  
րէր էզ իմ հրացանս: Աչխարի գլուխը խաչ ե-  
փած էին: Բսի. «Դատօ՛ (մայրիկ), մից խաչը,  
թո՛ղ աղերքն ուտենք: Լեցուցին, աղերքը կե-  
րան: «Պարոն Սերոր, ըսին աղերքը, չայ մը չի-  
նե՞նք: «Որ ունէք, չինցէք, — պատասխա-  
խան տուաւ Սերորը:

«Գիտե՛ս, ինչո՞ւ համար եմ եկեր», ըստ  
ինձի Սերորը:

«Զեմ զիտեր»:

«Լաւ չէր 15 հոգով հոս զալս, բայց եկայ: Կամ պէտք է զաս հետա, կամ զէնքերդ պիտի  
տաս»:

«Գլխուղ վերեւ են կախուած զէնքերս,  
կընաս տանիլք»:

Բայց Սերորը կը խնդար: Ես ալ զիտէի,  
թէ կատակ կ'ընէր:

«Հաստատ կ'ըսեմ, պիտի զաս»:

«Դէ՛, ես ինչովէս զամ էս մեռած զրու-  
թեան մէջ: Այս 3-4 ամիս եղաւ, որ ես վրաս  
զէնք չեմ տոեր, փայտը ձեռքիս ման կուզամ»

...

«Եթէ չլաս՝ զէնքերդ պիտի տանիմ, որ  
աւելի յանցաւոր ըլլամ»:

Հրացանս ու փամփուշտներս վերցուցին  
կախուած անդէն, վերցուցին Սարգսի հրացանն  
ալ եւ պիտի տանիին: Մնացած էր առաջս խան-  
չալս:

«Խանչալս ալ ա՛ն», ըստ Սերորը Բզզո-  
յին, որ Գուրդէնի կոսուին ցախի մէջ էր մուեր:

Բզզոյն ձեռքը երկնցուց խանչալիս: Կոթը  
ես լոնեցի, լաստը՝ ան:

«Թողո՛ւր, ըսի, աղայ»: Ապա զառնալով  
Սերորին՝ ըսի: «Էս խանչալը ինձի փրկելու  
չէ, կ'արժէ մէկ ուուրի: Զէ՛ որ զու ինքը տե-  
սար Ախլաթ որ կծւակցի հայ մը մատնեց ինձ  
իրեւ: Թոխաթցի: Հեռաղիր տուին թոխաթ,  
այնտեղից բերին փոխարէնս Անդրանիկի անուն

մարդ մը, եւ դու էդ պատմութիւնը ինքը պատմեցիր ինծի: Հիմա դուք իսկական յեղափոխական, ես ալ թափակիթ յեղափոխական, մէկ խանչա՞ն ալ ինծի շատ կը տեսնես»...

«Բղդո, թո՛ղ, թո՛ղ խանչալը Անդրանիկի բոլ», ըսաւ Սերորը:

«Պէտք չէ, առէք», եւ տուի իրենց:

Աւոյի կինը բռնեց Սերորի ձեռքը եւ խընդրեց.

«Պարոն, ես կը խնդրեմ քեզնից, մի՛ առներ Անդրանիկի զէնքերը, տո՛ւր լուսահոդի Աւոյի խաթեր: Զէ՞ որ ես ալ Տամատեանի, Մուրատի ժամանակներէն նայեր եմ բոլորին՝ ինչպէս իմ զաւակներուս, բոլոր յեղափոխականներուն զաւակիս պէս հաց եմ կերցուցեր»:

«Դրուիսդ ուտէ քու կերցուցած հացդ», ըսաւ Սերորը բարկանալով:

Հոդ կանգնած էին 5-6 երիտասարդ սաստնցի, կային նաեւ տանտիրոջ թէ՛ համր եւ թէ՛ լեզուով տղաները: Եղն եւ այդքան երիտասարդ եկան եւ ըսին.

«Անդրանիկ, մենք էդպէս չենք ընդունիր, որ դայ՝ մեր տան մարդը թամնէ զնայ: Մենք կամ յետ կ'առնենք թուանքը, կամ մեզնից ալ երկու մարդ կը սպաննէ, կ'երթայ: Հօ էստեղ սարի գուռիսը չէ»:

«Խելօք կեցէք տեղերնիդ, ըսի: Նա իրաւունք ունի մեր զէնքերը առնելու: մենք ընկերներ ենք, էսօր կ'առնէ, վաղը նորէն կուտայ»: Էդ ըոսէին եկաւ Կիարիկայ Զաթօն, դրան առաջքը հասկցաւ խնդիրը եւ ըսաւ.

«Պարոն Սերոր, էդենց բան չեղնի կ'ընես. դում ու քու Աստուած, երբ պատահեցաւ սարի մը գլուխ, ի՞նչ կ'ուզես ըրէ՛, մեր տան մէջ ինչո՞ւ ըրիր էդ բանը»:

Զաթօն 70 տարեկան էր: Ես վարտիկ շապիկով դուրս եկայ, Զաթոյին ըսի: «Կտրէ՛ ձէնդ»:

Զաթոյի տղան՝ Հայրօն բարկացաւ իր հօր վրայ եւ ըսաւ. «Քու ի՞նչ պէտքն է կը խառնըիս»:

Սերոր իր ընկերներով գացին Կէլիկուզան: Ես վեր կեցայ, շորերս հագայ: Հայրօն, Զօլո-Դօնէն, Գէվոյի տղան՝ դոնէն բռնեցին թեւերս եւ կամաց-կամաց կ'երթայինք գիւղ: Մաղրասէն անցանք: Առաջի հովիտէն խմեցի.

ջուր: 4-5 օր բերանն հաց դրած չէի. դեռ մոլթի քրտինքը վրաս կը վազէր: Ջուրը խմելուն ուշաթափ եղայ: Հետիս տղերքը դլուիս լուսացին, կուրծքս չփեցին: Մի հինգ րոպէ վերջնորէն վեր կեցայ: Բարձրացանք վերեւ:

Սալրասայ դիմաց ծառերի տակ նստած էր Սերոր իր խմբով: Ես բարեւ տուի: «Կեցի՛ր, ըսաւ, մէկտեղ զնանք»: «Տե՛ս, հիւանդ եմ, ըսի, կամաց կամաց կ'երթամ, դուք ալ եկէք: Ելայ Գէսիքայ կամը, Սերորը յետեւիցս զրկիր էր հրացանս ու պատրոնաշերս (փամփուշտակալ) Հասոյի եւ Բարսեղի հետ, ըսելով թէ՛ «կապիկ'ր վրաէ, մէկտեղ երթանք»: Սերորն ալ հասեր էր մեզ: Ես ըսի: «Այս աղերք, ես ինչպինքս ալ չեմ կրնար տանիւ, զէնքն ո՞ւր տանիմ»: Հետո գանուած տղայոց մէկին ըսաւ: «Գայցէք գեղը (Կէլիկուզան), ըսէ՛ք, Սերոր կուզայ, թո՛ղ տեղ պատրաստեն: բայց չլսէ՛ք, թէ Սերորը Անդրանիկի զէնքերը առեր է, էտպէս է ըրեր էնպէս է ըրեր: Տես՝ ձենէ առաջ մարդ զացած չէ գեղ, եթէ էդ լուրը հոն ելնէ: Դուք ըսած կ'ըլլաք»:

Զօլո-Դօնէն զնաց գիւղ՝ տեղ պատրաստելու համար: Երբ կը հասնի Խաչօ-Մարտիրոսի քով, հոն կը գտնուի Կիրակոսը: Կ'ըսէ՛ «պարոնն ու Անդրանիկը կուգան, տեղը դրսացէք»: Յարութիւնն (Առաքելոց վանքի կուուին սպաննուալ) ու Թորոն հոն կ'ըլլան, տեղ կը պատրաստեն: Ես 20 քայլ կ'երթայի, կը նըստէի, չէի կրնար քայլել: Նրանք բարձրացան տունը, ես նստայ երկիցփոխան Օհանի դուռը:

Միսիթարցի տղայ մը ըսեր էր Թորոյին ու Յարութիւնին, թէ Սերորը Անդրանիկի ու Սարգսի զէնքերն առաւ: Գիւղի բոլոր ժողովուրդը կ'իմանայ այդ: Յարութիւնի ու Թորոյի զէնքերն ալ այդ տանն են եղած: Սերորը հրաման կ'ընէ, որ այդ զէնքերն ալ վերցնեն: Յարութիւնը սարսափելի ուժեղ տղայ էր, մէկ տղայ կը շպրտէ մէկ կողմ, մէկն ալ մէկ կողմ: Սերորը կ'ըսէ: «Յարութիւն, զէնքերդ բի՛ր տեսնեմ»: Յարութիւնը կը տանի զէնքերը, կը յանձնէ Սերորին:

Այդ ըոսէին ես ներս մտայ: Յարութիւնը սաստիկ բարկացած էր: Վրէն բարկացայ, մէկնը կտրեց: Նա կ'ըսէր. «Զախմախիլը մըն ալ ձեռքս անցնի, էլի պիտի ընեմ յեղափոխու-

թիւն, թուղ բերդանկա չըլլայ: Եթէ մարդ եմ, չառան ախլըն չուտ այնալը կ'ընեմք:

Դիւղի բոլոր զիլաւորները հաւաքուեցան հոգ և խնդրուան Սերորին, որ տղայոց զինքը տայ: «Եղ ձեր դիանալու դործը չէ՛», ըստ Սերորը:

Մրկոյնան մօտ էր: Մենք չորս ընկերս շառանք իրար, որոշեցինք Դաշտ զնալ: Աշուն էր: Բարձրացանք Փետոյի տան զոմի վերեւ, ելոնք Մրկոյնան կամքը, որը Միսիթարայ դիմացն էր: Ես մեռած զրութեան մէջ էի: Տղերքը բախի: «Դուն մնա՞» մենք կ'երթանք Դաշտ Հրայրի քավք:

«Արթին, բոի, զինք չունեցող մարդը կին մը չարձէ: Կերթաք, երկու քոս քիւրդ ձեզ կը բանէ, կը առանք Մուշ և կ'ըլլաք էշ նահատակ: Եկէք, երթանք Միսիթար, նամակ մը գրենք Սորոյին, մէկը Մշոյ կոմիտէին, մէկը Հրայրին, մէկը պ. Վարդանին (Տէրիէվանցի, անգամ կոմիտէի անդամ, մեռած 1905-ին բանտի մէջ): Եթէ նրանց համաձայնութիւնն ըլլայ՝ զինքերնիս առնելը, է՛չ ի՞նչ ընենք, դուք առ իր թողուք, կը հեռանաք:

Համակներ զրեցինք վերայիշեաներուն, նաև Դաշտ զացող մեր չորս ընկերներուն, Հուկացուցինք եղածները: Նրանք կը կանչեն մեր չորս ընկերները և կ'ըսեն: «Մինչեւ զինքերը չփարձնէ էնոնց՝ գուք Սասուն չէք գտնարք:» Կ'որոշեն, որ Հրայրը դայ Սասուն: Հըրայրը կը խստանայ: Էղ առեն քոչերը զացած էին, առերբ զատարկուած էին: Երկու օր կ'անցնի: Երրորդ օրը Հրայրը կուզայ Շէնքը: Մենք կը զանուէինք Միսիթար:

\* \* \*

Մշու կոմիտէն եւ Սաքօն կ'իմանան, որ դորք պիտի զնայ սարը Սերորի վրայ: Իսկոյն Դաշտի չորս տղայոց կ'իմացնեն թէ՝ «Չո՛ւտ, զնացէք սար, զօրքը զնաց Սերորի վրայ: Կամ խոյս տուէք, կամ կուտեցէք»:

Զորս ընկերները կը վերցնեն իրենց զինքերին եւ ցերեկով կ'ընկնին սարը: Կուզան Հաւատորիկ, այնտեղից կուզան սար:

Խալիլ վերցուցած էր Բըդըրցի եւ Խարզացի իրեն աշխրը, Ալբ-կաչան 600 դորք, 100 ձիաւոր: Զօրքի մի մասը կը թողուն Շէնքը, Աէմալ, մնացածով կուզան կէլիկուզան:

Հրայրը, ինչպէս ըսինք, Շէնք կը զանը-էքը: Գիւղացիք կը թաղցնեն նրան: Ես հիւանդ պառկած էի, երեք ընկերներս քովս կը գտնը-էին: Քովերնիս զէնք չկար: Եղան եկաւ, դուռ զարկաւ թէ՝ «աղմբք, ելէք, ասկեար ե-կաւ»: Ես գուրս եկայ վարտիկ շապիկով:

Զօրքի առաջը հասեր էր Մձելնայ աղրիւրը: Աւոյի տղայ Մակարը զրկեցի Կէլիկուզան Սերորի քով ըսելով, թէ շուտ զուրս ենի բարձրանայ, զօրքը եկաւ:

Մակարը կը հասնի Հուսէինցիք, կը զրկէ Զօր-Դոնին Սերորի քով: Զօրքը մեզ աւելի մօտ էր, քան Սերորին: Մենք ընկերներս սկսեցինք հեռանալ: Յարութիւնը շախմաշը վերցուց մնաց Միսիթար՝ ժողովրդի մէջ: Գեղաչէնու մատնիչ Ալէն զօրքի չոր հաղած՝ ընկած է զօրքի առաջ: Այդ օրը տղայոց շորերը կը լուան եղեր, այնպէս որ տղաքը տակի չորերնին չեն ունեցեր հաղած:

Ալի փաշան կ'ըսէ Խալիլին, փոլիս Հիւսնի էֆէնդիին, Մէհէ չաւուշին: «Աւ մը նայեցէք արեւին: Եթէ զի մարզը զիւղը ըգտնուելու ըլլայ, ձեր անսած արեւը էսօր է:»

Խալիլն կ'ըսէ: «Ես իմացեր եմ հաստատ անդը: Արանից երեք ժամ՝ առաջ ալ զիւղն է ե-զած:»

Իշխան ձորի տէրտէրը, որ կ'երթայ եղեր Սէմալ, կը բոնեն, մօրուսը կը փետեն: Այդ տէրտէրը խիանցի միւղիր Քոս Սլոյի հայ է: այդ պատճառով զօրքը Քոս Սլոյի խաթեր համար՝ բաց կը թողուն տէրտէրը:

Ամրող մատնիչներու ընկերութիւնը, Խալիլն ու Հիւսնի էֆէնդիին, Մէհէ չաւուշն ու քոռ Սլոյ երկու ամիս աշխատեցան Սերորին ձեռք ձգել: Մշեցի նազարը (որը վերջերս Մշոյ Դաշտին զուրս եկած ատեն բոլոր ընկերներու համաձայնութեամբ սպանուեցաւ մէցի Սմրտի ձեռքով) Մշոյ կոմիտէի կողմէն Սերորի քով կ'երթար կուզար: Այդ տղան Հիւսնի էֆէնդիի ամենամօտ բարեկամն էր: Դեռ մեր մէջ բաժանում չեղած՝ ես լսած էի այդ տղի անոր հետ բարեկամ ըլլալը եւ ըսած էի պ. Սերորին թէ՝ «Աս կասկած ունիմ այդ տղու վրայ»: «Զէ, ըստ աւ, էղպէս տղայ չէ: Կոմիտէի կողմէն կ'երթայ կուզայ, նամակ կը տանի կը բերէ, առանց

վախի, որովհետեւ Հիւսնի էֆէնդին նրա բարեկամն է»:

Երբ ես գնացի ճէղայիրը սպաննելու՝ Հօռայրի պաճանախը (քենեկալ) Յովհաննէս վարժապետ ըստաւ.

— Անդրանիկ, փոլիս Հիւսնի էֆէնդին օր մը շատ հարբած ինձի ըստաւ, թէ սասունցի այսինչ մարդը եկած Գլըլընդո Մահմուտին մատնութիւն ըրածէ:

— Էդ ո՞րն է, վարժապետ, հարցըրի ես: Էդ ո՞ր գեղացին մատնութիւն կ'ընէ:

— Է՛հ, վազ եկուր, ի՞նչ կ'ընես:

— Ախալէ՛ր, ես քեզի չըսի՞ թէ Հիւսնի էֆէնդին էսպէս ըստաւ. դոն ըսիր, ես ալ կը հարցնեմ, որ զգոյշ ըլլանք:

Նա կը կասկածէր եւ չէր ըսեր: Ես թուղթը ձեռքս կը սպասէի, որ մանրամասն պատմէ, դրեմ, տանիմ Սերորի ձեռքը: Որ չէր ըսեր, ես խանչալս քաշեցի, վիզը բռնեցի եւ ըսի.

— Կամ կ'ըսես, կամ վիզդ կը կարեմ. լո՞նչալէս թէ չես ըսեր մատնիչի մը անունը:

— Կեցի՛ր, ըսեմ, կեցի՛ր, կեցիր:

Վիզը թողուցի, սկսաւ պատմել.

— Հիւսնի էֆէնդին կ'ըսէ՝ չէնքըցի կընէ-ընքոյի տղան՝ Կարապետը եկած է Գլըլնթօ Մահմուտի տուն եւ մատնութիւն ըրած է Սե-րորի վրայ: Գլըլնթօ Մահմուտի տղան ինձի պատմեց, ահա՛ ես էլ քեզի կը պատմեմ: Բայց բերնէդ չպէտք է ելնէ, ուրիշն չպէտք է ըսես, թէ Հիւսնի էֆէնդին ինձի էսպէս ըստաւ:

— Շա՞տ խմած էր Հիւսնին:

— Շատ էր խմած:

Ըստաները թղթի վրայ գրի առի: Մենք մտածեցինք թէ՝ եթէ Հիւսնին էտպէս բան մը ըստած ըլլայ, անպատճառ թշնամարար է, որ մենք էդ տղան սպաննենք: Շատ մարդու վրայ խելքերնիս կը կտրէր, որ մատնեն, բայց էդ տղու վրայ երբեք կամկած չունէինք: Հիւս-նին\*) դրա տունը կ'երթար կուզար: Կարա-պետի կինը գեղեցիկ էր: Գիւղացոցմէ լսեր է-լնք, թէ Հիւսնի էֆէնդին այդ կնոջը ձեռք էր զարկեր: Վերջապէս, մենք ոչ մի եղբակացու-

թեան չեկանք: Յամկնայն դէպս, սկսեցինք էդ տղայէն զգուշանալ:

Տասը օր չէր անցեր Սերորէն բաժնուհենիս, երբ թուղթ մը բերին ինծի, խմորով վակցուած, որու վրայ գրուած էր հասցէ ըն-կերներու ձեռքը: Կարգացի եւ տեսայ, որ չէ-նըցի Լաքոյի տղայի՝ Կարապետի վերաբեր-մամբ է: Ինչ որ պատմեց մեզի Յովհաննէս Վարժապետը, նոյնն էր գրուած եւ բան մալ աւելի: Ես նամակ մը գրեցի պ. Սերորին, խըն-դիրը բացատրեցի եւ գգուշացրի Կրպոյէն: «Ե-հա կը զրկեմ Մուշն գրուած նամակը եւ Յով-հաննէս վարժապետի պատմածները, կը կար-դաս եւ կ'իմանաս»:

Սերորը կը պատմէ քանի մը սասունցինե-րու, թէ Կրպօն մատնութիւն կ'ընէ: Բազոր սասունցիք կ'իմանան: Օր մը սասունցիք կը վերցնեն Կրպօն եւ կը բերեն Սերորի քով: Կըր-պօն բոլորովին կ'ուրանայ:

— Ինչո՞ւ չեն ըսեր ուրիշ մարդու մը հա-մար, քեզ համար կ'ըսեն մատնիչ, — կը հար-ցընէ Սերորը:

— Պարոն, Ալոււած վկայ, կը զրպարտեն. չէ՞ որ մարդ բարեկամ ալ կ'ունենայ, թշնամի ալ:

— Լրած ես թէ չես ըրած, այս անդամ կը ներեմ, — կ'ըսէ Սերորը եւ այդպիսով կը փառէ հարցը:

Գիւղացէնի յայտնի մատնիչ Աւօն ամուս-նացած էր Կէլիկուզանցի աղջկան մը հետ: Կոնջ երեք եղբայրները միշտ լրտես էին եղած Կէլիկուզան Սերորի վրայ եւ լուր կը տանին եղեր Աւէին, ան ալ Հիւսնի էֆէնդիին, Խալու-լին, Մըհէ չաւուշն: Մշեցի Նազարը կոռւէն օր մառաջ պ. Սերորի քովն է եղած: Ալաշուց Հիւսնիի ձեռքով թունաւորուած ծխախոտ ու պանիր Նազարի հետ զրկուած է Գեղացէնի Ա-մէի քով: Գեղացէնի Աւէն ծխախոտ եւ կ'լու (պանիր տեսակը) կնոջ եղբայրներից մէկի ձեռքով Սերորին իրրեւ ընծայ կը զրկէ: «Եթէ հարցնեն ո՞վ է զրկեր, կ'ըսես Աւէփարմու տէր-տէրն է զրկեր»: Ծխախոտը կը քաշեն Սերորը, Զրքօն եւ բուզանըլսցի Գէորգը: Սէրթ ծխախոտ որ ըլլար՝ Սերորը ինքը կը քաշէր: Ամբողջ ա-մառը, մինչեւ կոտու ժամանակները՝ օր մասող, օր մը Հիւսնի անցուցեր էր: Վերջին օ-

\*) Հիւսնին շատ լաւ հայերէն գիտէր:

բերք հիմնդութիւնը սաստկացած է եղեր։  
Բուրժամարդացի Գլորգը աւելի շատ է հիւանդ և-  
զեր, Զըրքոն եւս հիւանդ է եղեր։

Երբ Մակարը զրկեցի գէպի զիւզը լուր  
տալու թէ զօրքը կուրայ՝ Զօր-Դօնէն աւելի  
շուռ վաղ կուսայ, լուր կուսայ Սերորին և  
կը վերադառնայ։ Տղերքը զուրս կուրզան տնէն,  
կը սկսին բարձրանալ։ Ինքը Սերորը Եկեղեցու

մասը արդէն բարձրացած էր և զանազան կողմ  
զնացած։

Բղդօն երեք փամփուշտ վառած՝ ոտքերուն  
կը զարնուի կ'ընկնի. ձեռքի հրացանը եղած է  
իմ հրացանս եւ իմ փամփուշտներս։ Գիւղի մէջ  
եղած զիւզացիք կը սկսին փախնել; Կը տեսնեն  
Բղդօն ընկած և հրացանը ձեռքին, բայց չեն  
համարձակիր հրացանը վերցնելու։ Ազա զորք,



### ԱՆԴՐԱՌԵԽԻ ԵՒ ԻՐ ՏԱՄԱՎՊԵՏՆԵՐԸ

Առաջին շարքը կանգնած՝ ճախէն։ — ՍԵՊՈԽ, ԱՆԴՐԱՌԵԽԻ Եւ ՄՈՒՐԱՏ  
Երկրորդ շարքը ծունդի՝ ճախէն։ — ՊՕՊՈՍ, ԱԿԵՑԻՍ, ԿԱՅՑԱԿ ԱՌԱՔԵԼ, Եւ ՄՈՒՇԵԳ

յետեւը կ'եւէ : Խալիլ, Հիւանին և Մըհէ չա-  
ռուշ տանից առաջ կ'ըլլան։

Սերորը կը դառնայ կ'ըսէ. «Տղե՛րք, նա-  
յեցէ՞ Երեք զնդակ պիտի զարնեմ»։ Երեք զըն-  
դակ կը զարնէ՝ մէկուն չի կպիր։ Կը պոռան  
Սերորի յետեւից. «Մարտեփ, մարտեփ, խում-  
բըլարտ, շար զը քըմ» (մի՛ փախնիք, մի՛  
փախնիք, տեղդ նստիր՝ կոռուինք)։ Տղայոց մի

քիւրդ կուրզան, կը սովաննեն Բղդօն և կը վեր-  
ցընեն հրացանը։

Մինչեւ էղ օրը Սերորը մեր հրացանները  
իրեն զլիսու վերեւ է կախած ունեցեր. Երեմն  
զինուորները կ'երթան, հրացանները կը խառ-  
նեն եղեր։ Սերորը աղօնց վրայ կը բարկանայ  
եղար. «Ուրեմն, ես հրացաններու տէրերը ողջ-  
ողջ թաղեցի և զուք կ'ուրախանա՞ք հրացան-  
ներու վրայ։ Մինչեւ վերջը էղ հրացանները



ՍԱՍՈՒՆԻ ՏԵՐ ՔԱԶ ՔԱՀԱՆԱՆ

ոչ ոքի չեմ տար, կախուած պիտի մնան»:

Կոռուի օրը իւրաքանչիւրը իրեն հրացանը կը վերցնէ: Սերոր կ'ելլէ 4-5 ընկերով Ռաշիկ Սըրքոյի տուն: Սըրքո կ'ըսէ. «Լուսցէք քէօշքը, ծակերուց դարձէ՞ք»: Քէօշքը ռազմական ձեւի շինուած էր: Սերոր կ'ըսէ. «Ներսը լաւ չէ»:

Զօրքերը եւ քիւրդերը 3-4 տեղի բաժանուելով՝ գիւղը կ'ուղեն պաշարել: Զինուորները 2-2, 3-3 զանազան տեղեր կը հեռանան: Ես հասեր էի Տաղւրընի: Հրացաններու ձայնը դաշտարեց եւ զօրքի մի մասը սկսաւ վերադառնալ: Ես ըստ թէ՝ «Տողալրդին, թէ՝ քովիս ընկերներու»: «Ճղմ'րք, զօրքը կոտորուեցաւ եւ կը դառնայ յետ»: Կուիւր տեւեց 3/4 ժամ: Բուլանը սիցի Գէորգին կը սպաննեն Բէսորէ հովիսի քով: Սեղրակի հրացանը կ'աւրուի, կը մտնի բուլի մը տակ, զօրքերը չեն տեսներ նրան: Մշեցի Փոթիկեան Արամը հրացանը տեղ մը կը պահէ եւ կը փախնի. կը հանդիպի քիւրդի մը, քիւրդի թուրը ձեռքին կ'առնէ. եւ առանց նրան սպաննելու, թուրն ալ կը նետէ ու կը փախնի ինքը: Քիւրդը կ'ելլայ կը վերցնէ թուրը ու կ'երթայ:

Օր մը այդ հրացանը հովիւները գտեր էին եւ բերեր առւեր պ. Վահանին: Փոթիկեան Արամը մոռցեր էր պահած տեղը:

Զըքօն եւ Մխօն Խոշոքայ տակը սպանն-

ւած են: Սերորի տղան՝ Յակորը Ռաշըկնու վերեւը սպաննուած է: Սողոն ալ մի ուրիշ տեղ էր զարնուեր: Սերորը առաջ վիրաւորուեր էր ոտքէն: Սօսէն վրան կ'երթայ ու կուլայ: Հեռուէն զօրքերն ու քիւրդերը կը նկատեն, որ էդ է Սերորը, զալպերը կը խիեն եւ Սերորը կը սպաննուի: Հասոն ալ հէնց էդ ըոպէին կը զարնուի:

Այդ բոլորը տեւեց, ինչպէս ըսի, 3/4 ժամ: Սերորի գլուխը կը կտրեն, Սօսէն կը նստեցնեն ձիու մը վրայ, Սերորի գլուխը կը վերցնեն հետերնին ու կը գառնան Մուշ: Սօսէն կը տանին Գեղաշէն: Մատնիչ Աւոյի կինը կ'ըսէ. «Դո՞ւն էիր լուրը բերողը մեղի, Հայաստանը պիտի աղատէիր»: Սօսէն ստացած էր իսանչալի երկու վոգրիկ վէրք: Զիու իւլարը կուտան մշեցի Նաղարին, որ քաշէ, կը տանին Խասդիւղ, Խասդիւղէն Բաղէչ:

\* \* \*

Ես այդ կոռուի ժամանակ առանց դէնքի առաւտուանից քախելով երկու ընկերոջ հետ, երեկոյեան մօտ հասայ Եղգարդ եւ Սպաղանք: Բնի թէ՝ «կորիւ կայ Սերորի վրայ, չուտ հասէք»: Հոն կար կանոնաւոր զէնք եւ փամփուշտ: Լուրը յիտեւիցս եկաւ, թէ ամէն բան վերջացաւ: Հէնց էն ատենը, երբ հրացաններու ձայնը գաղարեց՝ ամէն բան վերջացեր էր:

Սերորի եղրայր Մխոյի կինը այդ ատենները Ախլամէն եկած էր Սասուն: Նա հագած էր սասունցի կանանց նման շոր եւ աղատած էր Սերորի փոքրիկ երեխան: Յարութիւնն ու Մեղրակը երեխան շալակեցին բերին Սպաղանք:

Սերորի մնացած ընկերները զանազան տեղիր կը փախնին եւ կ'աղատուին: Փախնողները արդէն կոռուղ մարդիկ չէին, նոր 2-3 ամսուան և կած էին Սերորի քով:

Այդ կոռուին սպաննուեցան ութը ընկեր եւ վիրաւորուեցաւ թշնամու կորմէն միայն մի զօրք, այն ալ առողջացաւ: Այդ օրը սպաննըւան նաեւ Կէլիկուղանի Տէր-Քաջ քահանան: Քուոս պատ Գէվօն: Զօյօ-Դոնէն վիրաւորուած էր թեւէն, վիրը առողջացաւ:

Կէլիկուղանի տաւարն ու ոչխարը տաքեց էին թալան:

Այդ օրը ոչ մի սասունցի կոռուին չէր մաս-

նակցած։ Զէին հասեր նաեւ դաշտի մեր չորս  
ընկերները։

Եթէ մեր ձեռքը զէնք ըլլար, երբ զօրքերը  
լլարնին եկան՝ մենք կը զարնէինք և կարդի-  
լինք զօրքը Աերորի վրայ գնալուն։ Զօրքը պի-  
տի կարծէր թէ Աերորը հող է, կոփու հող պի-  
տի րոյար։ Աերորը պիտի հնամար աղասուէր։

զատուէին։ Բայց բան մը գուրս չեկաւ, որով-  
հետեւ հիւանդ էին։ Աւրորը կնոշ պատճառաւ  
չէր ուղեր ման դալ. ուր որ երթար, անպատ-  
ճառ ամիս, երկուամիս պիտի հոն մնար։ Կըո-  
ուից առաջ երկու ու կէս ամիս մնացեր էր կէ-  
լիկուղան։ Աժէն մարդ զիտէր նրա հոն ըլլա-  
լու։



ՍԵՐՈՅԻ, ՃՐԱՅՐԻ և ուրիշ եօրը նահատակներու անշուր գերեզմաններուն վրայ (Կէլիկուղան)

շատ կարելի է ընկերներս այ վախնէն աղասու-  
ուէին, իսկ ևս հիւանդ ըլլարու պատճառու՝  
կը սպաննուէի։

Երբ Հրացաններու ձայնը երաւ, Յարու-  
թիւնը վերցրեց չախմախլին և մնաց ժողովրդի  
մէջ, իսկ մենք արտասուրք թափելով հեռա-  
ցանք։

Մենք այն հաւատքն ունէինք Աերորի և  
այդ քանի մը կոռուզ ընկերներու վրայ, որ  
այդ զիրքերն ունենալով պիտի կոռէին և ա-

վերջին ժամանակները Աերորը Ապագանք  
եկած էր։ Կէլիկուղանի քեամթիր կիրակոսը  
նամակ մը զրած էր, թէ «պարո՞ն, զօրքի, աշի-  
րի ժամանակ պահեցինք, հիմա երր էզոնք զը-  
նացին, գնացիր, հեռացար, խաղողը մինս՞կ  
կուտէս»։ Նամակին տակը զրեր էր իր ստո-  
րագրութիւնը, նաեւ զիւղի իշխաններու ա-  
նուններ։

Գիւղացիք աեղեկութիւն չունէին այդ նա-  
մակէն։ Էնոնք վերջին ատեն կ'ըսէին։ «Ո՛յ ար-

զայ, մենք քեզ ինչ տուեն նամակ գրել տուինք, որ առանց մենէ հարցնելու մեր անունները գըրել եւ նամակիդ տակ»:

Այդ նամակի պատճառով՝ Սերոբը՝ և օր Սպաղանք մնալով՝ կը վերապառնայ Կէլիկուզան:

Զանչած չորս օր Սպաղանքէն վերադառնալուց՝ պատահեցաւ այդ ճակատագրական կոփը (1899-ի աշնան):

Այդ նամակի նպատակն էր Սերոբին Կէլիկուզան պահել, որովհետեւ Սպաղանք հեռու ըլլալով, մինչեւ զօրքը հոն հասնէր՝ հարիւր մարդ լուր տարած կ'ըլլար Սերոբին: Այդ Կէրակուը այդ ժամանակ եւ մինչեւ օրս ալ բարեկամ էր փոլիս Հիւսնի էֆէնդիին:

Սերոբի սպաննուելուց 2-3 օր վերջ քիւրդերը կանչեցին եւ բախտ տուին Տալորցի Խաչօ-Գասպարը, Փրկուայ տէրտէրը, Դրվէ Ստեփանը եւ Գետմը-Համզէն: Դրանք Տալորցի իշխաններ են, չորսն ալ փախստական եւ պիտի երթային Կառընու մոլային եւ Քոռ Սլոյի քով:

Ես իմացայ այդ լուրը եւ անմիջապէս մարդ դրկեցի թէ՝ «չըլլայ երթաք, ձեզ պիտի ճերակալեն, տանին»:

Երեքը դացին քիւրդերու քով, իսկ Գեամը-Համզէն չզնաց: Գայողներին ճերակալեցին եւ տարան Փասուր, Փասուրէն կինձ, Խաչօ-Գասպարը, որ Խալիլ հայն է՝ տարան Բաղէշ, իսկ Դրվէ-Ստեփանը եւ տէրտէրը, որ Քոռ Սլոյի հայ են մնացին կինձ: Խաչօ-Գասպարը եւ իր տղայ Աւօն բռնուած են Մուրատ էֆէնդիի հետ: Աւօն փախած է 95-ին Գէորգ Զատուշի հետ, իսկ Գասպարը փախած է 96-ին:

\* \* \*

Շէնըցի Հէպօ-Վարդանի տանը կը գըր-նըւի ծրար մը ճերմակ թող, որ պատի ճեղքի մէջ է եղեր: Տան կիներից մինը կը տանէ Շէնըցի մեր ընկեր Մանուկին եւ կը հարցնէ՝ «Էս ի՞նչ է»: «Զգիտեմ ի՞նչ է», նա կը տանի Հէպոյին: Քիչ մը լեզուին կը զարնեն. երկուքի ալ լեզունին կ'ուռի, ատամնին կը շարժուի. անմիջապէս թթու ջուր եւ թթու թան կ'ուտեն, կը դարձնեն:

Բոլոր գիւղերը լուր ելաւ, թէ այսինչ տունէն սուրէյմա ելաւ: Այնպիսի թոյն մըն է եղած, որ մարդը մի ժամուան մէջ կը սպաննէ:

Մանուկը այս ինծի ժանրամասնութեամբ պատմեց: Երբ մենք յետոյ Կէլիկուզան ընդհանուր ժողով ունեցանք, ես Հէպոյին գաղտնի հարցուցի: «Ո՞ւր է էն թոյնը, տո՛ւր ինծի»: Նա ըսաւ. «Գետն եմ ձգեր»: Գիւղացիք հարցըրին Վարդանին. «Եղ ի՞նչ բան էր, քու տան մէջն ելա»: «Վալլա՛հ, ես ալ չգիտեմ»:

Գինթոյի Մահմուտի տղան որ եկաւ, լուր բերաւ թէ՝ «ձախ Սնդրանիկ փաշային ալ կը տանայ Աստուրի տունը վառեցինք. Թշնամութեամբ ձգեր է մեր տունը, որ բոլորս ալ մեռնինք»:

Բոլորն ալ կը վկայեն որ այս Վարդանը Գինթոյի Մահմուտի լաւ բարեկամն է եղած եւ ամէն անդամ Մուշ գնացած տանն՝ առանց տեսնուելու չէին բաժնուեր: Նոյնիսկ առեւուըրական յարաբերութիւններ ունէին իրար մէջ..

Այս հէնց նոյն Վարդանն է, որ երբ Հրայրը Շէնըք մեր զէնքերը կ'առնէր, խանչալը քաշեց վրաս եւ պահանջեց Խալիլի ճէրէն հանակնիքները եւ Կէլիկուզանի պայմանագիրը: Այս մասին կը պատմեմ յետոյ:

(Շարութակելի)



ՀԱՅՐԵՆԻՔ  
ԱՄՍԱԳԻՐ

HAIRENIK  
MONTHLY

13-15 Shawmut Street, Boston, Mass.  
U. S. A.

Entered as Second Class Matter January 31, 1923, at the Post Office  
at Boston, Massachusetts, under the Act of March 3, 1879.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի համար	
Տարեկան .....	\$5.00
Վեցամսեայ .....	3.00
Արտասահման	
Տարեկան .....	\$5.00
Վեցամսեայ .....	3.00
«Հայրենիք» Օրաբերրի հետ միասին	
Ամերիկայի համար	
Տարեկան .....	10.00
Վեցամսեայ .....	5.00
Փոստամի եւ շրջանի համար	
Վեցամսեայ .....	5.00
Արտասահման	
Տարեկան .....	10.00

SUBSCRIPTION

In U. S. of America	
Yearly .....	\$5.00
Six months .....	3.00
Foreign Rates	
Yearly .....	5.00
Six months .....	3.00
Hairenik Monthly combined With Hairenik Daily	
In U. S. of America	
Yearly .....	10.00
Six months .....	5.00
For Boston and Vicinity	
Six months .....	5.00
Foreign Rates	
Yearly .....	10.00

ՍԵԴՐԱԿ ԱԶԱՏԵԱՆ

Ներկայացուցիչ

NEW YORK LIFE

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

141 Milk St., Room 427 Boston, Mass.

TEL. HUBBARD 4900



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0076069

ЦЕНА

6238